Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Lbn
1802

1999

ՄԵԾԱՆՈՒԱԲԱՆՈՒԹԻՆՆ

Աշխատասիրեաց

Խահակ աւագ Քահանայ

Սահառունի։

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍԻ

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

Ի յս ընծայեաց Նուիրական արդեամբք Տիտուլեարնի Սոլէանիկ և տապետ Գէորգ տէր Գրիգորեան Սղնախեցի։

—

Ի ՏՓԽԻՍ։

1862—ՌՃԺԱ.

Ի ՀԱՅ ՏՊԱՐԱՆԻ

ԳԱՐԻԵԼԻ ՄԵԼՔՈՒՄԵԱՆՑ ԵՒ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

Լեռ
1802

41802-ա

Հբ. 1803

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

Съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Тифлисъ. 17. Марта, 1862 года.

Цензоръ И. Кайтмазовъ.

ցըն քարաձեռ սատակեցաւ։ Վասն որոյ և մաղթեմ՝ի գաւառաց բանից իմոց ոչ այնքան առ իմ վէպս զոլ անձնապէշ, որքան՝ի գործս ամենաբարի Արարչին, յորում ամենայն մտահաս լինել զերազոյն գոյութեան նորա և բարերարութեան։

Թողուցի սատանօր խօսիլ երկարաբանութեամբ զարտադրելոյն մեղրազարծ մեղուացս՝ի նեխեալ գիշոց և՝ի նեխեալ ոսկերաց արջառոց, որպէս բանք են բազմաց նախնի իմաստասիրաց, որպէս զրէ Փիլոն «որ ժողովէն զնա մեղուն ոչ մաքուր կենդանի է,՝ի նեխութենէ և յապականութենէ մեռելոց... յարջառոց ծլեալ, որպէս և ձիւաստացք՝ի ձիական մարմնոց»։ Եւ Խիքիաս թէ «յոսկերաց արջառոց ծնանին մեղուք», որոց բանք միայեալ ընդ սոյնօրինակ համաբարբառ բանից Եղեանոսի, Նիկանդրի, Վարոնի, Վիրգիլիոսի և այլոց բաւական են ամենայն ընթերցողաց և լսո-

զայդ գործոյ իմ սիրուն մեղուաց, վասնզի-
ցոյ և չառնամ ես 'ի պատմութիւն ներ-
կայ գոյութեան, եզանակի իմաստուն կա-
ռավարութեան և ամենայն անանգոանելի
գործոց նոցա, որք գրուատիք են նոցա:

ԺԱՄԱՆԱԿ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ԶԱԳՈՒՑ ՄԵՂՈՒԱՑ

Ի յուսիս ամենան կամ'ի վերջին ա-
ւուրս մայիսի, սկսանին մեղուք խմբովին
արձակել 'ի բունոյ իւրեանց 'ի վեթակէն
զձագս: Զարդուցն այնոցիկ ըստ պէտքութ-
թեան նոցին են և պէս պէս անուանք, որք
են մայր, տեղատես, մշակ, բոռ և ձագ: Յե-
տինքս այսոքիկ անուանակոչին յառաջնա-
ձագք, միջնաձագք և յետնաձագք, զի մե-
զուք 'ի միում ամի բազում ձագ տան, մա-
նաւանդ երբ տարին անձրևային է, և ոչ ի-
բաշտ, նմին իրի և ունին զանուանս անդ-
բանիկութեան և յետնութեան: Յառաջնա-

ձագուցն երևելն լինել մարք երեք կամ չորս. սոքա երկար են դրութեամբ քան զձագսն և գունով ևս գանազանք, զի ո-րոյայն ոչցա արտաքուստ պճնեալ է կարմ-րագեղատ շքեղութեամբ և խարտն թոյլ քան զձագուցն, վասնորոյ և ոչ ճեղասել կա-րին ումեք 'ի խայթելն, որպէս ճեղասին ձա-գուցն խայթողք: Գործ մարցս է առաջ-նորդ և կառավար լինել նորածնեալ մե-ղուացն պարու, զի ուր իջեալ զկոյ առ-նուն մարք, անդէն զնոքօք գումարին և ձագքն: Ո՞վ մեծ ի բարերարութեան Տեառն զօրութեանց. ո՞վ մեծ ի խորհրդոյս. այո՛, այո՛, խորհուրդ մեծ է, որով ճանաչեմք և զգամք զԼինաման Տեառն. վասն այն զի՝ եթէ չքոտին մեղու ոչ կարէ առանց կառավարչի ուղիղ ընթանալ զիւրդ ապա հնար է բո-վանդակ տիեզերաց առանց ծայրագոյն կա-ռավարչի անկարուստ և անխրատրառնալի պահպանել զգոյութիւն իւրեանց: Տեա

զու, բա՛րեմիս այցելու իմոց մեղուաց, տես աչօք բացօք և զգա՛ յանձին քում՝ յոսկերաբղ և յերակաբղ զանզգամութիւն անխնամեանցն զբաղատութեանց, որք զծայրագոյն գոյութեանն ուրանային զխնամս, և զի՞ի մոխ, թէ Աստուած է խնամող ամենայնի. փութա՛, քարո՛զ կարգաւորամենեցուն համարձակապէս, թէ նա է՝ որ արար զերկինս և զերկիր. զծով և զցամաք ձեռք նորա ստեղծին և նա խնամարկեալ կառավարէ զամենայն. և եթէ երկմտութեան ինչ քօղ առաբաստէ զյիշողութիւն քո, հա՛րց յոսկերաբղ, և տա՛ հոքա աղաղակեն և ասեն՝ Տէր, ո՞ նման քեզ. հա՛րց նաև ցանբանս և ցանզգայս, և տա՛ միաձայն գոչեն՝ Նա արար զմեզ և ո՛չ մեք էաք։ Ապաքէն՝ որ արարն, առ ի նմանէ ունին ամենայն էակք զսկիզբն գոյութեան և առ ի նմանէ պահպանին պաշտպանողական աջով։

ԳՈՐԾ ՄՇԱԿԱՑ

Բեր քարոզեսցուք այժմ նախ զբաղմարդիւն մշակացն զգործ սխրալի։ Մշակ անուանեալ մեզուքս այսոքիկ են ի դասակարգէ անտի նորընծայ մեղրագործ մեղուացն, յորոց ոմանք լինաբերան բերեն ըզՁուր, այլք լինաբուռն զգեղեցկատեսիլ յոքնասեր ծաղկունս ոանաւոյթս, կէսք զայլ և այլ հիւթս և թափեն 'ի նախապատրաստեալ զարմանագործ վերցանկիւնաւոր ծակտիս, որ ասի մաղ, կամ բձիճ և կամ չէջ, իսկ այլք՝ որ 'ի փեթակի անդր կան, 'ի բերեալ զանազանակերպ նիւթոց անտի կազմեն զմեղր ախորժաճաշակ, յորմէ և վերհատուռ թագաւորք և իշխանք և այլ ամենայն վերհաւորք և սոսկականք ճաշակեն և վայելեն անձկանօք, որպէս փոքրաքանէ մերս քերթողահայր յասելն՝ «մեղու զերկասիրութիւնն պատուէ, որոյ գործն պատուականագոյն է, թագաւորաց

միադամայն և զեղջկաց երթալով 'ի բըժշկութիւնս։

Փութացիր, արի՛ զու բանեղէն մշակդ կարգեալ 'ի մշակել զերկիր, եկ 'ի խոյզ և 'ի զնին փոքրիկ ուսումնարանի բարեջանութեան անդանդաղալատակս մեղուայ։ ուսիր, լե՛ր և զու մեղուաջան 'ի գործս առաքինութեան, զի թագաւորն երկնաւոր 'ի հաճոյս իւր ընկալցի զգործս քո, և այլք տեսեալ զգործս քո բարիս, փառաւորաբացեն զՀայր քո՝ որ յերկինս է։ Եւ ես փութացայց զարձայց անդրէն 'ի կարգ բանիս մանուածոյ ի հռչակահարութիւն այլոց սխրագործութեանց իմ պատուական մեղուայ։

Մեղուքս այսոքիկ բուն եալ բնաւորեալ զնաեղեալ ի փեթակս կամ այլ ուրեք, ուր և հաճև հաւան զտանին ինքեանք, ընտրեն ի մարց անտի իւրեանց զանդրանկաճին, զառաջանձնեայն, զոքնոցն, ըզ-

բարի Ջանն, զաչալուրջն, զանարատն և ըզ-
հանճարեղն 'ի միապետական առաջնոր-
դութիւն հանրականին 'ի փոքրադիր քա-
ղաքի անդ բնակութեան իւրեանց, իսկ
զայլս թուլակազմն և տկարս 'ի կառա-
վարութեան զհիւանդոտս, յեռանաճինս,
զապաջանս, զքնուկս, զպանդաղկոտս և
զեւ-էք իրօք արատաւորս և պակասաւորս
միահաղոյն յարձակեալ 'ի վերայ և արա-
բեալ նշան նպատակի խայթոցաց իւրեանց,
նահատակեալ հատուցանեն յարեմուտս
կենաց իւրեանց, և ապա 'ի սպառիլ շնչոյն
կալեալ յաջմէ և յահեկէ զթեւոց մարցն
ապանելոց իրրև զխայտառակեալսք անար-
ժան բնակութեան 'ի գաւառի անդ մեղ-
ուականին բազմութեան, արտաքս, հանեն
յաշխարհէ անտի կենդանեաց և ձգեն
զխաթաւալ յաշխարհ մեռելոց 'ի մուտս
փեթակին, որ կոչի ըստ գաւառական դոր-
ծածութեան արկանոց, այսինքն, տեղի

արկանելոյ 'ի նշան նշաւակի ապաշանից և 'ի տես բազմութեան անցաւորաց։

Օրինակ բարեզգեաց ընծայեն մարդկութեան իմ սիրուն մեզուք ընտրութեամբ հանճարեղացն յառաջնորդութիւն և 'ի նահապետութիւն ազգի իւրեանց և. ժողովրդեան և բացամերժութեամբ յուլից և ծուլից և պակասաւորաց և ապաշանից 'ի գումարտակէ անտի իւրեանց. և որք 'ի բանեղինաց անձկանօք զհետ երթեալ նախանձելի օրինակիս այսմիկ՝ յընտրութեան զլեռաւորի և կառավարչի իւրեանց անանխանձաբար բարեկրեալ առաջի աչաց կալցեն զազգին օգուտ և ոչ զանձանց իւրեանց. նոքա յիրաւի ընտրեսցեն զարժանաւորն, զտքնողն և ըզհանճարեղն 'ի զլխակարգութիւն ազգի և եկեղեցւոյ. և յայնմ հետէ ազգն զի՞նչ 'ի խաղաղութեան և յանպահարակելի կարգաւորութեան կալցի զգոյութիւն իւր իբ-

րև յաւուրս Սողոմոնի. իսկ եթէ թողեալ
լքեալ զայնպիսի այր՝ բազում դովեստա-
բանութեան արժանաւոր, զթոյլն, զտղէտն,
զանուսն և զքաղմօք արատաւորն կացուս-
ցեն իշխան եկեղեցւոյ և դէտ ժողովուր-
դեան, ընտրօղքն յայտնապէս թշնամի ազ-
գին հանդիսացեալ, զանդարձ վնաս, զող-
բալի կորուստ և զանտանելի կործանումն
ձեռամբացի բերեալ մատուցանեն համազ-
գայնոց 'ի յաւիտենական անարգակրու-
թիւն առաջի ազգաց օտարաց։ Վասն այն-
պիսեաց ընտրողաց այսպէս ասէ Առաքեալն՝
«Զերկրաւոր առեանս եթէ յանձն առնու-
ցուք, զանարգան եկեղեցւոյ դատաւորս
նատուցէք (ա. Կոր. Զ. 4)։ Իսկ ես ասեմ. այն-
պիսեացն վայ, հազար վայ, բիւր վայ, միշտ
և հանապազ վայ, մինչև ցգերեզման վայ
և յետ այնորիկ վայ և եղուկ. վայ որ ա-
սիցէ զբարին չար, և զչարն՝ բարի, վայ որ
ասիցէ զլոյսն խաւար, և զխաւարն՝ լոյս,

վա՛յ որ դնիցէ զդառն՝ քաղցր, և զքաղցր՝ դառն։ (Ես. Ե. 20)։

Արդ՛ այ մեղուաւէր, ընկա՛լ յինէն զսէր բաղում, զդոհութիւն բաղում, և զդովութիւն բաղում, բաղում. բաղում և բաղում, զի իսկապէս բարոյք ներակրթեալ երևիս 'ի պանծալի հանդիսութեան անդ պարուց պատուական իմոց մեղուաց աշխարհագով անաչառադատութեան յընտրութեան կառավարչի. զբարոյք կրթակոնութիւնդ փորձեայ և եռեռս ազգ մեր և եկեղեցի սուրբ, փառաւորեցաք ամենեքին, այո՛ փառաւորեցաք բարենախանձ ընտրութեամբդ գլխոյ մերոյ և կառավարչի և բացորոշութեամբ պախարակելեացն անհանձարից։ Ուստ ամենեցուն այդ օրինակ աշակերտիլ միշտ իմոց բարեսէր մեղուաց յընտրութիւն բարեջան գլխաւորի և վասն յետագայից արամեանս ազգին 'ի շուք և 'ի փառաւորութիւն մեր և 'ի շինութիւն և

'ի բարեկարգութիւն տաճարաց փառաց Տեառն Աստուծոյ. և միանգամայն թոյլ տուր ինձ անդրէն դառնալ 'ի լիակատար պատմութիւն խմբատուն մեզուաց խմոյ. զորոց զՀանդամանօքն նոցա եկեալ ծանօթս քեզ արարէց և զանազանութեան սէր նոցա և զՀնագանդութիւն առ ընտրեալ կառավարիչ իւրեանց:

Սինչդեռ կենդանի կայ այս առաջնորդ մեղուական մի՛ուրեան, առաջնորդեալ քեզ ակնածութեամբ բազմաւ հնազանդեալ նորուն հրամանաց, և արիաբար պարապեալ մեղրաշորժութեամբ, զիմն այր իւրաքանչիւր յիւր գործ պաշտաման՝ զեղեցիկ իմն կարգաւորութեամբ և անդադարաջան փութով յօրինեն զհրաշագիտակ հայց մեղրալեցս. այլ երբեմն հատանեն ամա տեսանել զիտաւարն արեւու կենաց իւրոց, իսկոյն քակտի կապակցութիւն նոցա, խանդարի և խառնակիրպի խոպառ

ղեղեցիկարդութիւն նոցա, բոլորիքին նոքա խառնեալ՝ հակամէտ ՝ի սեւասիրտ տխրութիւն անհնարին տագնապաւ տառապանաց և սաստիկ աւաղաձայնութեամբ բերին ՝ի շփոթութիւն անպատմելի ընդ մահ Դիտին իմաստնոյ մօրն սիրելւոյ, և չըժուժեալ անհնարին ցաւոցն սակաւառ սակաւ ախտակրեալ նոցա բոլորապէս մի զմիւսով անկեալ թօթափեալ մեռանին, և բոլորապատուղ ընծայեալ նմա զանձինս իւրեանց ՝ի նշան առաւել սիրոյ և երախտեաց նորա, թողուն յաշխարհի զյիշատակ բարեաց պանծանաց։

Փութա՛ փութա՛ երախտաճան մեղուաս էր, փութա՛ ՝ի տես հանդիսի զարմանալի սիրոյ, զովանի հնազանդութեան, անենդ և անպղտոր երախտագիտութեան իմ խոհեմ մեղուացս առաջնորդելոց ՝ի հանճարեղ կառավարչէ։ Հնազանդեանց և դու ամենայն անմեղաճ ին յառաջադրութեանց

մեծաւորաց քոց վասն Տեառն. Կայսեր՝ իբրև պատկերի թագաւորին երկնաւորի, զի զրեալ է՝ յԱստուծոյ երկերիւք զԹագաւորս պատուեցէք (Պետ. Բ. 17)։ Իշխանաց՝ իբրև բարերարաց, զի իշխանքըն ոչ են յերկիւղ բարեաց գործոյ՝ այլ չարաց. (Հռովմ. Ժ. Գ.)։ Հայրապետաց և եպիսկոպոսաց՝ իբրև ուղիղ վարդապետութեամբ համառօտողաց 'ի մեզ զբանն կենաց և տքնողաց վասն հոգւոց մերոց, և ամենեցուն, որոց 'ի պաշտաման կան՝ զի որք են՝ յԱստուծոյ կարգեալ են, արդէս ասէ առաքեալն սուրբ։ Տեա. զընտանի ուշի ուշով զմահ մեղուացս ընդ մահ երախտաւոր վերակացուի իւրեանց. ապաշեմ՝ զքեզ եղբայր, զի և դու ծանիցես զվաստակաւորս և զվերակացուս քո 'ի Տէր։ Ծանիր զնա, և եթէ անձնապէսի է նա վասն ազգին բարեդրութեան, կամ և համբուրեա՛ ախորժանօք զոտս նորա, և եթէ ոչ զկեանսդ, զոմէ զինչս քո տո՛ւր վասն

նորա, սիրեա՛ զնա, քարոզել կարդա յաշ-
խարհ ամենայն, զհամբաւ ի հայր զբարե-
բարութիւնն նորա և զերախտիս։ Իսկ ե-
թէ 'ի պատերազմի կաս ընդդէմ թշնա-
մեաց, յանկանել կառավարչիդ 'ի դաշտին
փառաց, անձնամատոյց լեր և դու ընդ նմա
ուժեղակ մրցութեամբ 'ի փառս Հայրե-
նեաց և յազատութիւն եկեղեցւոյ Աստու-
ծոյ 'ի ձեռաց ստելեաց և անհաւատ զաւաց,
զի ընկալցիս զդոյութեան պերճութաւոյ-
ծառ պատկ և եղեցիս վայելուչ թագ ար-
քայութեան 'ի ձեռին Աստուծոյ։ Քո՛ Հուսկ
ուրեմն քաղցրացի՛ քեզ՝ և հեռեալս
շարունակութիւն պատմութեան մեղ-
ուացն երանելեաց, զոր հարկ բանիս ա-
խորժէ զգրոյ ածել 'ի գիրս ազգի-
տաց նոցուն սիրազարծութեանց։

ՄԱՅ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՄՕՐՆ ՄԵՂՈՒԱՑ

Խոհեմ մեղուատէրն լրբև տեսանէ զբոլոր զաղէտս, զառգ և զտրամութիւն մեղուացն, 'ի խառվութենէն և յանկերպարան կառավարութենէն մանուանդ 'ի խանդարև 'ի խափան մնալոյ զևրապանծ գործարանի նոցա, իմանայ զմերձ ի մահ գ'ալն, կամ զմահ մօր նոցա առաջնորդին իմաանոյ, և գիտացեալ փորձիութիւն անշուշտ ունին բոլորեքին զմահ համբուրել յետ մօրն մեռանելոյ և ապաշնորհել զփեթակին հանդիսարան, հապճեպ փութոյ իսկոյն յայլ նորարձակ ձագս իւր կամ օտարաց, յորոց առեալ զմայր մի արկանէ 'ի շփոթեալ փեթակ անդր մայրակորոյս մեղուաց առ 'ի կառավարութիւն անկառավար մնացելոցն. և զի՞նչ յայնմ հեռէ. սքանչելիք մեծ, այո՛ սքանչելիք, զոր լեզու մարդոյ ո՛չ զօրէ պատմել, այլ ես

սակաւուք պատմեցից, զի նոքա ոչ ըստ
ճախանային ժողովրդեան յապշութիւն գան
'ի զբնդենէ գերանի արկելոյ 'ի Դիսաէ 'ի
ճահիճն 'ի թաղաւորել 'ի վերայ անկա-
ւաւալար գորտանց՝ որք խնդրէին զթա-
գաւորս այլ որպէս ականջալուր եմ 'ի բազմաց
հմուտ մեղուապանաց, 'ի զահակալել նո-
րա զաթոռ փոխելոյն, ախտակրելոյն սա-
կաւ առ սակաւ ոչի առեալ ժրացեալ և
յանձանց 'ի բաց եղեալ զսուղ և զորբտա-
մութիւն, զառնան անդրէն յառաջին կերպ
կենդանութեան, զեղեցիկ կառավարու-
թեան և զարմանաւորն մեղրադրծութեան
իւրեանց իբրև 'ի միոջէ հրամանատուէ
առաջնորդեալք։ Ա. յայսմէ նոր առաջնորդ
առեալ լինի նոցա 'ի մայրութիւն և 'ի
կառավարութիւն յայնոսիկ ամիսան միայն՝
յորս սովորաբար ճապս արձակեն մեղուք,
իսկ յայլս՝ յորս ճապարձակութիւն ոչ է, 'ի
մեռանիլ մօրն, սակաւ առ սակաւ մեռա-

նին և ձագք նոցա թողեալ լքեալ զբազ-
մաժողով քաղաք փեթակին բնակարան
լինիլ գարշատեսիլ և ախրագոյն գիշե-
րագուսոյն հանապազագիշեր վայոցի։

Բարեշնորհ մեղուասիրիդ ահա խրատ
խորհրդաւոր արժանաւոր և շահաւոր
աւանդեն իմ մեղուք։ Իբրև տեսանես դու
զժողովուրդ ցեռան զրկեալ 'ի բարեջան
առաջնորդէ, մի՛ թողուր զնա զրեալ 'ի
հոգեվարս 'ի թախծութեանց հասելոց
նմա զկնի մահուան բազմերախտ հով-
ուապետին, այլ նոյնհետայն լեր մտատանջ
և մտախոհ, թէ զո՛ ոք արժանի է ընտրել
փոխանակ փոխելոյն առ ցէր, որ կարող լցէ
անձնադիր լինիլ, զի հովիւ քաջ զանձն
իւր դնէ 'ի վերայ ոչխարաց, որպէս դը-
րեալ է, զքաւս ազգին բառնալ, և լինել
նմա ձեր պատկառելի, սքանչելի խորհրդ-
դական, այր հզօր ըստ մարդարէին, շի-
նող աւերակաց և ո՛չ կործանող. կամ լաւ

ևս է ասել խրատուցանող, և երթ է, ամենեքեան նոքա՝ որք առապազոյնքն են՝ և պատուելի կարծեցեալք, խոտորեալք են 'ի միասին և անպիտանացեալք . . . ուշ ինչ խակոյն բուռն հար զայլ հնարից 'ի խնամարիութիւն ազգին, զոր ես ցուցից քեզ. ահա քեզ այլ հնարք, ընարեա 'ի գիտուն և 'ի բարեկրօն երիտասարդաց զմի որ 'ի զարծ պաշտամանդ այդորիկ 'ի գերակայութիւն կառավարութեան, զի մի' անազբուխ և անկատարեալ խոպառ ճեռացեալ ազգին՝ ցանուցիր զխմեացեն զՀովանեօք կանդաչաղեղ երևեալ կաղնեաց, և ապա զբժուարին լցէ և տարժանելի համաժողովել քեզ զցրուեալսն : Դու ինձ հաւատա՛, որ նորահաստ յիմաստից հարեալք 'ի հրահանգ ելթէ զհետ երթիցեն շուրջաց ազգաշէն դասդրի խրատից, զնոյնօրինակ ազգաշինութեան և հայրենասիրութեան կարին յանձին բերել զտիպ, և ճոխա-

ծալեկ բարեօք բեղմնաւորիլ, և եթէ ոչ
զնախորդաւն, զէթ հաւչակելի զբազմօք
հանդիսաւոր վարդապետու-
թեամբք, և զախտացեալսն ողջացուցանել
տարամերժելով 'ի սպառ ապուռ զսուգ և
զտրամութիւն պատահեալ նոցա յետ մա-
հուան կառավարչի իւրեանց. բայց դու
որքան շունչ 'ի բերան ունիս, զիմանալի
խունկ աղօթիցդ ընդ զդալոյն բուրեա
անդադար, հան յերկինս 'ի վեր յաթոռ
ամենաբարձրելոյն՝ հարուսա ժամանակօք
յամայրաձել զկառավարիչդ՝ որ կայ այժմ
իբրև թագ վայելչագեղ կապեալ 'ի գլուխ
քո, զի մի՛ սասանիկ գլխացաւ և հոգևոր
ժանտախտ պատահեսցի ազգիդ. զրաւա-
կան առաքեա զաղերս քո 'ի վերնագաւառ
բնակութիւն երկնից խորանաց, զի եղեցի
նա մայր որդւովք բերկրեալ, որ միմիայն
յոյս է քո և ամենայն քոյոցն, տեղի ա-
պաս ինի և շտեմարան բազմամեթեր, և որ

գերագոյն և՝ նորաքանչ դարբին սայրաալաքագործ, որ 'ի դարբնոցէ իւրոց զօրեղ մահաց ընծայէ զՀատուս զերանդիս 'ի լուծումն ստառապանաց քոց և վշտաց հասելոց պատահելոց քեզ յանկանեմ և յապաշնորհ կառավարչաց անիրաւաց, խաստաց, ալպատամբողաց և 'ի փարաւնասարաս ներչաց և յասպատակարար երկրակաց՝ յաւէտ ազահութեան ծառայողաց քան Աստուծոյ ստանալի՝ քան թէ մարդկան։ Տո՛ւր փառս Աստուծոյ, տո՛ւր զօրհնութիւն Մարդասիրին թագաւորին յաւիտենից, որ ետ քեզ զկառավարիչ անզուգական, և լե՛ր նմա հնազանդ, զի Նա միայն ոչինչ վասն քո, և որոց քո են. և ես բանաձառելոյս մանաւորապէս և վասն քանութեանց ճաշուցն արձակելոց 'ի ծոցոյ փութակէն։

Յառաջնաձագքն ունին զկատարեալ թիւ բազմաւորութեան, և զեզանակ բարուք

կառավարութեան, որոյ վասն և տակա-
ռապետն մեղաւոր ասին քաղաքս ճաշա-
կաւորութեամբ վատակոյ իւրեանց զմեղս,
այլ ցեռնաձագքն՝ որոց ըստ մեծի մասին
սակաւաւոր է թիւ նոցա և պակասաւոր
յոյժ յոյժ քան զցառաջնաձագուցն, ոչ
ունին և ոչ ունել կարեն զկատարեալ քա-
ջալաւ եղանակ կառավարութեան 'ի փոք-
րագարիսպ քաղաքի անդ բնակութեան
փեթակի իւրեանց և ոչ կարեն զվարկ
խնամակալին իւրեանց ճշմարտել կենցա-
ղոգուտ ընծայիցն հրաշակերտութեամբ.
նմին իրի տէրն նոցա նախատեսանելով
զսակաւաւորութիւն նոցա և զվերահաս
սատակումն՝ խոհեմութեամբ իմն զնախա-
հոգութիւն յանձին բերեալ զերկուս կամ
զերիս այժմաճին ցեռնաձագս յայլ և այլ
փեթակաց եկեալս 'ի մի և 'ի նոյն աւուր,
միաւորեալ զնոսա 'ի մի փեթակ, որոց միա-
բանեալ անդէն իրրև համամարք, անապա-

թաքօրէն մկեալ մատչին 'ի զարմանալին
գործ մշակութեան առ 'ի պահպանողին
խրատուց լինել վասականաւէր բազմա-
բաշխութեամբ. համեղաճաշակ մեղու. և
ներհակ այսմ եթէ ակր նոցա վնասակաւ
լին միախառնեալ ուղղաւորէ զսակաւա-
ւոր ցեղանաճադս ընդ սակաւաւոր ցա-
ռաջնաճադուց, յայլ և այլ ժամանակս
արձակելոց 'ի փեթակէն ճաղաճնութեան,
որպէսզի լինին երբեմն յերաշտ ամսոն,
յայնժամ անդ է տեսանել զմարտ սաստիկ
պատերազմի 'ի փեթակին մինչ, զի ամե-
նեքին նոքա լքեալ թողեալ զսեփհական
գործ մշակութեան խրատուց և զժկամա-
կեալ 'ի պաշտման մեղրազործութեան,
խաղան զիմեն յարձակին 'ի վերայ միմեանց
'ի կաղ և 'ի կոխ սայրատուր խայթոցացն
յառաջքերութեամբ, և ապա յետ բաղ-
մակիսի անողորմ խայթոցահարութեանց
զմիմեանս, բազմաւորքն՝ քաջարշաւ և

արտաս իմն յառաջխաղացութեամբ Ջարդեալ խորտակին զսակաւաւորսն, յորոց զամանս զխակնացուցեալ խապառ, և զայլս կխակինելսն արարեալ կամ զբկեալ յոտից և 'ի թևոց՝ զեռնաքարշ հանեն տանին արտաքս 'ի փեթակէն և դիցեն զմիմեամբք ի հրապարակի արկանոցին 'ի ցոյց մեծի յաղթողութեան և քաջութեան իւրեանց, և ինքեանք զկնի այսօրինակ բազմաքնաստադործ մարտադրութեան, է որ՝ տիրեալ տեղակալեալ անհնդիւր կենաց մնան 'ի փեթակին, է որ՝ ելեալ բոլորովքիմբ՝ ճապաղ ճեպով աճապարեն 'ի փախուստ յանտառս և 'ի լերինս առ 'ի զտանել ինքեանց բանակեաղ, ուրանօր ծառամուտ կամ ծերպամուտ լեալ զաչարին, կամ մտանեն յայլ փեթակս զիսմամբ առաս և անդ եւ՛ ելեալս 'ի մարկանէ յորս այսպիսեաց փախստէից և ապստամբելոց 'ի տիրապետութենէ բուն խնամակալս ին իւրեանց,

և է որ՝ ոչ կարացեալ 'ի պակաւորութենէն զուղիղ և զանապատաք կառավարութիւն ունիլ, զչարեալ տատակին ամենեքեան մի զկնի միոյ։

Բարեմի՛տ մեղուասէր, լեր յանձին բերող զձև սխրագործութեան ցուցակի երկասէր իմ մեղուաց. նոքա 'ի պակասաւոր զոլն բարեխառնին ընդ այլոց իրև ազգակիցք իրերաց և անհակառակաբար ծառայութեամբ և անդանդաղ վաստակօք գործեն զքաղցրաճաշակ մեղր յօգուտ տեառն իւրեանց, որ անխոնջ յուսով և. ապաժուժութեամբ բազմաւ ապասէ համեղ աշխատասիրութեանն նոցա. արտաքինեանց և դու զբռնութիւն կամաց մարմնոյդ հնազանդել հոգւոյդ կամաց, զի միաբանութեամբ երկաքանչիւրոց նոցա ծառայելով Տեառն քում և Արարչի, արասցեն զկամն նորա բարեաց երկասիրութեամբ։ Նո՛ւր իմաստանոյն, երթ, ասէ, առ

մեղուն, և ասէր զնարդ գործօն է, և գործ նորա որպէս պարկեշտութեամբ գործի, զորոյ զվաստակն թագաւորք և անանկք 'ի բժշկութիւն մատուցանեն. ցանկալի է ամենեցուն և մեծարոյ, զի թէպէտ տկար է զօրութեամբ, պատուական զիմաստութիւն և յարգեցաւ։ (Առակ. Զ. Ց) Լեր և դու խնամատուն ըղձաձգութեամբ 'ի ճոխաձաղիկ բարեաց գործոցն արդասաւոր Ջան, զի եղիցիս ցանկալի և Աստուծոյ և մարդկան. Աստուծոյ՝ իբրև բարերարի քում և աբարողի. մարդկան՝ իբրև մերձաւորաց քոց և եղբարց։ Իբրև տեսանես կամ զգաս յանձին քում, թէ մարմինքս և հոգի ներհակ ներգործութեամբք մաքառին ընդ իրեարս վասն անգոսնելի և անխիղճ կենցաղավարութեանցդ, իմա՛, թէ Աստուած մեկնեցաւ 'ի քէն զզուեալ 'ի չարագործութեանց քոց, և թէ կանուխ և թէ անագան ուշ նիս փախչիլ և դու յանցաւորկենցաղդս

անդարձ ճանապարհորդութեամբ 'ի մահ-
հասահման արկանոց գերեզմանին, ուր ա-
ռաջինք քո դնային. ուրմն ածապրեան,
հա՛ս վաղագոյն մինչև 'ի ճանապարհի
դանդաչես կենցաղոյս հաշանցուցանել
ծննդովք բարեաց զայրի եղեալ հոգիդ
ընդ անիրաւ մարմնոյդ, և ապա միութեամբ
նոցա հաշանցուցանել զԱստուած ընդ քեզ.
զի մի՛ կրկնակի մահուամբ բարոյականաւն
և բնականաւն եղեալ քո յաստուցս, յա-
խտեանական և անմահ մահուն ևս լիցիս
յանախս ժառանգորդ, ուր լուիցես 'ի
համաշխարհական հրապարակի ահեղ ա-
ռանին Քրիստոսի զանուանելին զայն ձայն
զժուարալուր՝ երթայք յինէն անիծեալք
'ի հուրն յաւիտենական և այլս Նո՛ր
Աշխարհափրկչին Յիսուսի. երանի՛ ասէ
խաղաղարարացս, զի նոքա որդիք Աստուծոյ
կոչեսցին. (Մատ. Ե. 9)։ Խաղաղութիւն
ասելով ո՛չ զոր և իցէ կռուոյն զդադարե-

ցուցանելն միայն յայտ առնէ, այլև զհաշտեցուցանելն հոգւոյ ընդ մարմնոյ և երկաքանչիւրացն ընդ Աստուծոյ զայրացելոյն յապականադործութեանց մարմնոյդ լրբութեանց։ Արա՛ ուրեմն զխաղաղութիւն և երանելի լինիցիս. պատուեա՛ զիմաստութիւն ըստ մեղուականին օրինակի, զի ցանկալի հրեշտակաց և մեծարոյ զանձնելոյդ գործեսցես, վասն զի գրեալ է՝ ուրախութիւն եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ վասն միոյ մեղաւորի՝որ ապաշխարիցէ (Ղուկ. ԺԵ. 10)։ Ապաշխարելն զի՞նչ է. եթէ ո՛չ ձեռնթափ լինել՝ի զաղրագործութեանց, գալ՝ի զիղջ վասն գործեալ մեղացն և հնազանդել զկամս մարմնոյ ներգործութեանց՝ կամաց հոգւոյն։ Ապաքէն՝ մի զարհուրիր՝ի մեղաց, փութա՛ յապաշխարութիւն, կրօնաւորեա՛ց բարեպաշտութեամբ, և նոյնժամայն անուն կոչեսցի քեզ

խաղաղարար և կամք Աստուծոյ զի հաճեսցի տէր ընդ քեզ։ (Եւ. ԿԲ. 4)։

Հուսկ յետոյ յառեա՛ դու զաչս քո՛ի միւս զդուշաւոր դորձս իմաստուն մեղուացս, զոր քեզդ պատմել ո՛չ դանդաղեցայց։

ՏԵՂԱՏԵՍՈՒԹ

Ի նորաթիւ աբոյս ձագս մեղուաց են, քանի միմեղուքուժեղակք և վեհ էժք, քանզայլսն, զորս 'ի գաւառս գաւառս պանծալոյն Հայաստանի՝ յորս գիրք են մեղուաց՝ անուանեն Տեղատեսք։ Պաշտօն սոցա ո՛չ այլ ինչ է, եթէ ո՛չ՝ իբրև տեսանեն՝ թէ ձագքն հասեալ են յարբուն հասակի և գործեալ են յակիւնս փեթակին զփոքրիկ լուսաթոյր հացիկս մեղու, որք ըստ գաւառական կոչման ասին Տեսրակք կամ ոլոճիկք, ի մացեալ տեղատեսացն 'ի նշանէ ասոյ, թէ ձագքն վարժեալ կրթեցան 'ի գործ մեղ-

բակաղմութեան և պատրաստ են եկանել
խսկոյն յառաջագոյն ինքեանք եկեալ շրջին
աստանդեալ յանտառս և 'ի լերինս 'ի տես
և 'ի խոյզ և 'ի պատրաստութիւն յար-
մարաւոր տեղւոյ առ 'ի բնակութիւն նո-
րահաս ճաղուցն պարու՝ ստաստղաց վե-
բադարձի նոցա, և իբրև քաջահաւան լի-
նին տեղւոյ իմիք, եկեալ ազդեն ճաղուցն,
և նոքա խսկոյն ընդ ազդարարութիւն տե-
ղատեսացն բազմաձայն բզզոցաւ զրոհեալ
եկանեն խմբովքն 'ի փեթակէն, և փախչին
դէպ 'ի հաւանեալ տեղին՝ զոր տեղատեսքն
ուսհակցեալ նոցա ցուցանեն։ Բազմաշխատ
մեղուատէրն, որ բազմօրեայ հսկողու-
թեամբ փեթակ 'ի ձեռին և ցաքատ 'ի
գօտին ժամս ընդ ժամս ակնապիշ սպա-
սէր եկից նոցա, տեսեալ թէ ապատամբե-
ցան ճաղքն՝ ամենայն արխութեամբ զհետ
ընդի նոցա, արագ արագ վերակնեալ պա-
հէ զհետս նոցա, զի մի՝ անյայտացին յա-

չաց իւրոց. բազում անգամ հող արկանէ
'ի բարձունս, զի փախատէցին անձրև կար-
ծեալ զայն, դարձընթաց լեցին 'ի փախա-
տանէն, և իջուսան կալցին ուրեք 'ի սահ-
մանս ճանճանոցին 'ի Հայրենատուր բնիկ
աշխարհի իւրեանց. և տեսեալ թէ այս
հնարք իւր նանրացան, իսկոյն ուշիմաս-
թեամբ իմն ձեռաձիւք և մտահաս լինի
յայլ հնարս 'ի նուաճել զկամակորութիւն
ապստամբողացն չուականաց. արագ արագ
սուլէ, մերթ զպղնձեայ ամանն ինչ 'ի ձեռն
առեալ փոքրիկ ճիպոտաւ կամ բեկորաւ
քարի հարեալ՝ իբրև զանգակ զբաղմա-
դիմի կնչնդիւնս հանէ, զի թերևս 'ի ձայն
պղնձեղենին իջցեն փախատեայքն, և բար-
ձեալ զեռեղեցեալ յիւր վերթակ, զոր 'ի
ձեռին կամ յուսն ունի նախապատրաստ-
տեալ. իբրև տեսանէ ուղղմելին թէ ոչինչ
կերպիւհնար եղև կակղել զկամակորու-
թիւնն նոցա, յանձարութենէ յոգւոց հա-

նելով զհետ պնդի նոցա մինչև ցանզին նախատեսեալ նոցա 'ի սեղատեսացն՝ յոքն վերակնուելեամբ անկարուստ պահելով ըզ-հետս ընթացից նոցին, և իբրև ինքանեն նոքա ուրեք 'ի լերինս, կամ 'ի ծերպս վեր-մաց և կամ յանտառս 'ի ծառս խառն-չունակս և ծոցաւորս, բարձեալ զնոսա անտի պարունակէ յիւր փեթակ, զորոյ զբերանն պինդ պատեալ բաձկոնաւ իւրով կամ շապկաւ զնէ 'ի վերայ ուսոց իւրոց և բերէ ցնծալով յիւր մեղուանոց, քա-րոզ խրախաձայն և աւետիս մեծ 'ի հե-ռաստանէ հնչելով 'ի լսելիս իւրոց ընտա-նեաց, բարեկամաց և դրացեաց, թէ ուրախ լերուք ընդիս, զի գտի զկորուստս իմ. միա-միւ՛ս լերուք, զի կալայ զփախստեայ իմ մե-ղուս. ահա՛ ելէք տեսանել զփեթակս բե-բանապինդ, զոր բարձեալ բերեմ ձեզ 'ի մխիթարութիւն։ Եւ ապա փութ ինչ հաց կերեալ և հանգիստ առեալ՝ մերթ ընդ

մերթ ձեռնաբռնուկ զբն կնոջն արարեալ, որ ունզլուկ 'ի պարանոցն խմբրոտ ձեռօք թենէթեկին ձեմելով ընթացակցի նմա ցնծալով ելանէ 'ի տանէն յայց և 'ի տես փենթակին յոչինչ զրեալ միանգամայն զկրեալ նեղութիւնն վասն խնդութեանն, զի կալաւ զնոսա և նուաճեաց զամեհութիւն և զապստամբութիւն նոցին։

Կալեալ փախատեայքս եթէ հաւանին փենթակին՝ յոր եղան 'ի տեառնէն իւրեանց խակոյն ամենայն արիութեամբ ձեռն 'ի զարծ զնեն պարապել մեղրատրծութեան առ 'ի պարտաւճար լինել խնամոց և վասատակց նորա, այլ եթէ անհաւան ոչնմ բերին, թէև զտակաւ ինչ մեղր կարեն անդամոր, բայց անդոնելի ծուլութեամբ, և զոգցես բռնութեամբ մշակեն իբրև զգերի ընդ ձեռամբ զերողեն ապասելով բարեբեր համբաւոյ և ազդարարութեան տեղատեսացն ելելոց 'ի խնդիր յարմարապատ-

շաճ տեղւոյ, զի ըստ ընտրութեան նոցա
ելեալ չուեցին՝ ուր տեղացոյց լիցին նոցա
տեղատեսքն։ Տեսեալ խնամողին նոցա, թէ
այս ակամայ մշակութիւն և դանդաղու-
թիւն անխրատբառնալի է ՚ի նոցանէ, և
թէ վաղ և թէ անադան մատղիր են նոքա
փախստականքն իւրեանց նանրացուցանել ըզ-
վաստակս իւր և զջանս, բարձի թողն ա-
բարեալ՝ ոչ ևս խնամատանի նոցա։ և ախով
վայել մոռեալ ի տուն իւր նստի և պատմէ
կնոջն զանուանելի դոլն մեղուայ և զլքա-
նելն զնոսա։ մինչ այս մինչ այն և ահա տե-
զատեսացն անդրէն դարձ արարեալ ապրին
մեղուայն զգիւտ նոր տեղւոյ և նոցա ժամ
յաջողակ գտեալ փախչին ի նախահաւան
տեղին, զոր ցուցանեն նոցա տեզատեսքն,
ուրանոր թէև վայրենանան նոքա, այլ ան-
բաժան յիրերաց մնոյ այս գերբաստան
մինչև ցմահ։ Բնութիւնատուր է նոցա և
երբեմն ըստ ընտրութեան տեղատեսացն

ինքնահալած փախչիլ տեղւոջէ ի տեղի, ի ծերպից վիմաց ի ծոցաւոր ծառոյ, ի ծոցոյ ծառոց յորոգայթաղրեալ փեթակս մեղուաց, և անտի այլ ուրեք. բայց ոչ և տեղափոխեացին, ամենայն ուրեք միօրինակ արիականութեամբ ներկասիրութեանն պատուեն զհանդէս, զինքեանս բարի օրինակ ընծայելով մարդկութեան. հուսկ ուրեմն յետ բազմադէմ ատանդականութեան մտեալ ի փեթակ ուրուք. անկանին վերսին ի դիրս և ի ձեռս մարդկան, ոչ կարեն ընտանեցեալ գործեն զաղնիւ մեղր ի պանս պանս. բայց մինչդեռ ձագ են, կազմեն զբաճիս սպիտակափայլս և գեղատեսիլս, այլ իբրև հնափետուր ծերութեամբ տկարանան՝ գեղնագոյնս և զսևորակս։

Ո՞վ Աստուածատուր իմաստութեանս, ո՞վ զարմանալի խոհեմութեանս, բա՞ր է մեծապարծուն հանդիսադրութեանս. ընթանան լիարերան զոհութիւնք առ Աստ-

ուած. փառք քեզ Աստուած, բազում փառք, միշտ փառք, յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից փառք, որ յայսոսիկ անբան գիշատացս աղդեցեր, կանդաղեցեր, եղեր զայսչափ ոյժ, և զօրութիւն և շնորհք, մինչև բանեղէն արարածոց քոյ յօրինիլ գեղապանծ հանդիսարան երկայնութեան, և լի պարծանօք և բազում գովեստաբանութեանց արժանաւորութեամբ իւրաքինն քաղցրաձաշակ բարեաց վայելեցն ճոխութեամբ և ժրաժիր բազմաջանասիրութեամբ ի զարմանս զարմանս բերել զրաւել զպատուհանս մարմնոց ուսողացն ընդ ուշոյ նոցա և մտաց։ Ա. Հա՛ անբան չքոտիքս սքանչանան քարոզ խնդալից բարեկրութեան բանաւորացս, յանդիմանեն զծոյլս ի մարդկանէ. ապաստրծ դատարկանձանցն առաջի եղեալ զանանդոանելին աշխատասիրութիւն, զբիւրակերպեան բարեյուսութիւն նախապատմեն

յաշխատանայն ձիւանց, և զչարիս մեծամեծս զառ ի դատարկակեցութենէն պատահեալս և պատահելիս։ Դանդաղաջան երկրագործայն յորոմեն զաշխոյժս ի գործէպինդ արիւնեամբ արկանել ի հող երկրի զարօր անդործ ժանկահար յակոսաբեկ պատուռումն փշապաշար և թանձրահող անդոց, մասնացոյց յապառնի բիւրաբերուն պտղաբերութեանցն պտակ լինելով և ի դէմս ածելով ծուլեցն այնպիսեաց զիմաստուն զայն բան ուրումն երջանկի, «գեղեցիկ պտղաբերէ փոքր ինչ անդ. քաջ մշակեալ. քան զբազում անշատման անխնամ թողեալ»։ Զառ ի քուն թանձրութեան հակեալ հալիւս, երբև խոթատնառ իմն խոթեն, շարժեն և զարթուցանեն յարթուն պեռուելիւն հօտին Քրիստոսի յանձնեալոյ ինքեանց և յանշարժելի պահպանութիւն նոցա ի գայլոց բանակատնայ և զառնադրեալոյ, զաւետիս անուս ա

յուսոյ ապագայ բարեդիպութեանցն հա-
լելով յսկանչս նոցա և ի միտս, թէ յե-
րևիլ հովուապետին ընդունիցիք զան-
թառամ փառացն պսակ (Ա. Պետ. Ե. 4):
Զանարի քահանայիցն զդաս զկրկին պատ-
ուոյ արժանաւորութիւնն առաջի դնելով
որպէս թէ ձեռամբայի կալեալ ածեն
վերհանեն յամենապարծն արքութիւն հա-
ստանել ի ժամու և ի տարաժամու և լինել
Ջերմագու թ առ ժողովուրդ Տեառն Ամե-
նակալի : Զինուոյ և հեղգաւէր զինուո-
րաց զպերճանալն կրկնակի պարգևօք կայ-
սերականօք և Աստուածականօք յառաջ
բերեալ վասահանալի զործն նոցա զդէն-
զսուր և զճակատամարտս ընդդէմ ասելոց
առ ի շնարհել ազգին զանկասկած կեանս,
և եկեղեցւոյ զան որրութիւն և զխաղա-
ղութիւն : Համայն հոլանեալ պարուց հո-
գևոր զեռաորաց Քրիստոսի խառատանալով
զինի յաստիս բարի ըստութեամբ կենցա-

զավարելոյ միախառնիլ ի արբերամ զաս անդամոց յաղթական եկեղեցւոյն անդրանկաց զրելոց ի յերկինս, նուաղաձայն հնչմամբ խրեանց զմեծաշահ քարոզ կարդան, Ջան զնել արխութեամբ զինուորիլ ընդդէմ մարմնոյ, ընդդէմ աշխարհի, ընդդէմ սատանայի և բաղում նեղութեամբք մտանել յայն հանդիսան և զուրախալին զայն լսել զձայն փրկչին, թէ Ծառայ հաւատարիմ մուտ յուրախութիւն Տեառն քո։ Մատ. ԻԵ. 21)։ Զանիրաւ վարժապետս յանդիմանեալ խրախուսին ի կիրառութիւն ժամանակիւորոց թողեալ զերկասիրութիւնն և լքեալ զդասատացութիւն ժամ առ ժամ զժամացոյցս հանեալ ի ծոցոյն հային յերեսս նոցա տեսանել։ Թէ ընդաճ ոչ ժամանակն, զի կարելոցն փութով եկանել ի դասատանէն և դիմել ի անաճապիկ խաղս և յունայնութիւնս աշխարհի, և զծոյլ աշակերտս նո-

ցս սախպեն յարխականութիւն, զի վարժեալ նոցա ի հրահանգս, յիւրումն ժամանակի գործեսցեն զանձինս իւրեանց պատուելի ի հասարակութեան, արժանաւոր ժառանգ եկեղեցւոյ և քաջ զինուոր հայրենեաց։

ՏԵՂԱՏԵՍՔ

Խորակնեան և սեռս արգոյ մեղուաէր զմեծաքանչ զայս գործ իմոյ մշտաջան մեղուաց, որք զբանաւորայ յափշտութիւն կրթեն զմիտս. կարծեմ թէ և քոյդ իսկ յափշտակեցան միտք տեսութեամբ սիրալի պատմութեանս. այո՛ յափշտակեցան։ Զսոցայիր և քաջ լեր, գտցէ անդրէն յուշ և ունկն զիր բանից իմոց. թէ տեսանես զոք ի համազգականաց մակացեալ վարժեալ ի հրահանգս իմոսոյց և կամիս զազգասիրութեանն ժառանգել շքեղ անուն, մի՛

թողուր զնա անխնամ և անոգաստ. եթէ կարօտի խորհրդատուութեան, ուր նմա զխորհուրդ շահաւոր. եթէ կարօտի տեղւոյ պաշտաման, առ ի հայթայթել զաւուրսն պարէն, լերնամա վաղագոյն տեղատեսն, զի մի՛ յանյուսութենէն ի սեւամաղձութեան հարեալ ախտ, յօժարեցի յանապատանորս բերել, և հուսկ յետոյ թողեալ զհայրենիս մեղուօրէն փախլցէ յայն տեղն, զոր այլք առաջնորդեալ ցուցցին նմա։ Քաղցրացի՛ քեզ հայրանալ և եղբայրանալ այրեաց և որբոց և տխրանալ տառապելոյ և տարաբուսելոյ. վասն զի զրեալ է, որ խրոց ընտանեաց խնամ ոչ ստրցէ, ուրացեալ է ի հաւատոց։ Տա՛ր ուրեմն ամենայն կարօտակաւոր խնամ։ և եթէ ոչ նոքա, զոմն Աստուած կարէ լինել քեզ փոխահատոյց ըստ այնմ թէ՝ յիշեա՛ Տէր և զայնոսիկ. որք յիշեն զաղքատս ուրախանաց թեամբ։ և հատո՛ նոցա զպարտս

նոցա ըստ ընդարձակս առատութեան քում հարիւրապատիկ ասա և ի հանդերձեալումն։ (Խորհրդատետր)։ Վասն հեռաւոր խնամողին մեղուաց։ որ յամենայն զօրութենէ ջանահնար լինի զփոխատեսչան դարձուցանել անդրէն յիւր վերթակ բազմօրինակ հրնարից յառաջքերութեամբ։ Զան դիր և դու զիմազրաւ լինել փոխատեան համազգայնոց քոյով մարդասիրութեամբդ, և երթէ ոչ ունին փոխարէն հատուցանելոյ քեզ։ հատուցի քեզ փոխարէն ի յարութեան արդարոց։ (Ղուկ։ ԺԳ։ 14)։ Ուր և իցես դու, համարեա՛ քեզ լինել ի տան քում։ ամենայն ուրեք յանձին բեր զախոյ մերուացս։ Ջանասիրութեան։ կա՛լ քեզ 'ի մարդկայինս յարացոյց զմերուաջան վերհիս իմոյ զաքնութիւնս և զջանասիրութիւն։ նա ցորչափ ասա էր, հարուստ ամօք ոչ քննցաւ յազգաշահ վաստակս, այլ ոչ վերհատեցաւ։ փոխեցաւ յայլ տեղի, զնոյն

մարդկայնելուչ բարեջանութիւն պա-
տուեայ. այլ ոչ դադարեցաւ, ամբարձաւ
ի նախապատուական աթոռս, այլ ոչ դադարի
այժմ ևս ի մաշելոյ զկեանս իւր ի շինու-
թիւն և ի շուք ազգին. և զի՞նչ այլ ի-
ցեն այս ամենայն աքնութիւնք նորա, ե-
թէ ոչ յարդել զերկս, որով ազգք բազումք
յոսին կանգնեցան, ի տաճար փառաց վե-
րաթռեան և ի ծայրագոյն աստիճան լու-
սաւորութեան հասին: Լուր մեղուացս
ձայնի՝ ոչ վասն մեր միայն՝ ասեն, գործեմք
զմեղր. լուր և շնորհալի առաձին, կեաց
վասն այլոց. իբրև ծնանի մարդ յաշխարհ,
այս պարտաւորութիւն նորա ընդ կաթին
մօր տպանայ ի սիրտ նորա՝ կեալ վասն այ-
լոց. այս պարտաւորութիւն է և քո կեալ
ի կենցաղս մեր ոչ միայն վասն անձին քում
առանձինն, այլև վասն այլոց. խորհեա՛
մտաւորութեամբ զի՞նչ են ծնողք, եթէ ոչ
հոգաբարձութիւնք բարեսնութեան մանկանց ։

Ո՞վ են որդիք, եթէ ոչ ստեղծեալք ի ծե-
ռատածութիւն ծնողաց։ Ո՞վ է արքայն,
եթէ ոչ բարեխնամ հայր հայրենեաց,
բեռնաբարձ ազգին վշտաց և նեղութեանց։
Ո՞վ է իշխանն, եթէ ոչ բարերար ազգի և ե-
կեղեցւոյ. զի ոչ է մարդ իշխան մարդոյ
առանց ինչ յատուկ բարերարութեան, և
Աստուած իսկ բարերարութեամբն իւրով
իշխանութիւն ունի ՝ի վերայ մեր, որպէս
բանքն են։ Ո՞վ է հայրապետն. մարդ հրեշ-
տակացեալ ի մարմնի, և այս պանծալի
տիտղոս վերհատուածութեան վասն այնորիկ
տուաւ նմա, զի եղեցի ընդհանրական բազ-
մաչեայ գլուխ և կառավար եկեղեցւոյ ի
սանձել զամենիս, բացամերժել զվերերև-
եալ թիւր ազանդս։ անարատ պահպանել
զեկեղեցին Աստուծոյ ի խօլադատութեանց
և բարեկարգել զամենայն։ Ո՞վ է եպիսկո-
պոսն՝ այցելու այրեաց. խնամատար որբոց.
վերատեսուչ բարեկարգութեան եղբելոյ ի

Հայրապետէն. սաստ վատթարաց պարզևատու վաստակաւորաց և բարեկրօնից, անարծաթասէր և անզօշաքաղ կառավար խրոյ վիճակի եկեղեցեաց և եկեղեցականաց և ժողովրդականաց. մեծաջան հիմնադիր դպրոցաց, և մեկնաս ուսումնականաց, որ եթէ թափուր յայտցանէ զատենից ի սպառ, յայնժամ իշխան է Հայրապետն մեծ՝ պահ տալ զվիճակ նորա այլոմ, որ անարատն լցէ յաժենայնի և կարող արածել զՀօտն Քրիստոսի վայելչապէս, ըստ մարդարէին բանի, թէ զայցելութիւն նորա զայն այլք տարցեն։ Ո՞վ է վարդապետն. մեծադոյշ քարոզ բանին ճշմարտութեան ի շինութիւն հաւատացելոց։ Ո՞վ է քահանայն. ո՞չ սպաքէն քեզ պէս մարդ հողածին, այլ կարգեալ անտես և միշտ այդուց Տեառն, յորոյ ձեռաց խնդրեսցի արիւն ժողովրդեան Ամենակալին Աստուծոյ։ Ո՞վ է զատաւորն. ո՞չ ի Հո-

դոյ անարգութեան արարած ձեռացն Աստուծոյ. այլ վասն բարեհամբոյր բնութեան նորա շնորհեցաւ նմա այս յարդելի անուն, այս վեմ վերատուութիւն ի բարերարել մարդկան Աստուածահաճոյ արդարադատութեամբ և ըստ ամենայն իսկութեան և զօրութեան տահմանադրեալ օրինացն տուրից դատ առնել որբոյն և իրաւ առնել այրւոյն։ Ո՞վ է զօրագեան. այր հաւատարիմ գտեալ ըստ սրտի արքային և կարգեալ յառաջնորդութիւն զինուորաց. այս վարաւոր կոչումն պետութեան ընծայեցաւ նմա առ ի յաղթել թշնամեաց և պահպանել զհայրենեան գաւառս ի ցանկալի խաղաղութեան։ Ո՞վ է զինուորն. մարդ սոսկական, այլ թագաւոր ի բնութեան իւրում, կարգեալ ի ծայրագոյն հրամանատուէն ազգի և աէրութեան առ ի բառնալ զզէն անխարդախ սիրոյ և զսուր անմեղ հաւատարմութեան յօգուտ հայ-

բենեաց, և ի պատերազմին ընդ թշնամեաց
սրատապնդեալ գոչել և ասել զքան Մակա-
բայեցւոյն, թէ մարտիցուք քաջութեամբ և
մի՛ խառնեսցուք զանուն վատութեան ընդ
քաջութիւնս մեր։ Ո՞վ եմ ես, եթէ ոչ մի
ի մարդկանէ, հողածին անդամ հասարա-
կութեան իմոյ ազգին ծնեալ վասն ազգին։
Ո՞վ ես դու, եթէ ոչ կանանցածին մարդ և
որդի մարդոյ, եղբայր իմ, բարեկամ իմ,
ազգակից իմ, սիրելի իմ, ստեղծեալ ի մը-
խիթարութիւն մարդկութեան։ Ո՞վ էր
Աղամ նախահայր մեր. յառաջ քան զստեղ-
ծանելն՝ ոչինչ, զինի յոչնչէն հող, ի հո-
ղոյն՝ մարդ, և ի մարդոյն տնաեռ և իշխան
ամենայն երկրաբնակաց արարածոց։ Ահա՛
տեսէք, թէ չէ՞ ոք յաշխարհումս վասն իւր
միայն, այլև վասն այլոց տեսէք, թէ պար-
տականութիւնք միմեանց օգնել, և զմիմեանց
բեռն բառնալ, այո՛ պարտական և միշտ
պարտական, որպէս վերատեսլոցդ պաշ-

տամուն՝ յայտնի ցուցին՝ թէ ամենե-
քին ստեղծեալ եմք ի ձեռնտուութիւն մի-
մեանց, հարուստք՝ աղքատաց, քաղաքա-
կանք՝ գեղջկաց, մեծք՝ փոքրունց, ազատք՝
ծառայից, կարողք՝ տկարաց, եւ եւ անդրա-
դարձաբար։ Ասէր ուրեմն յիմադով մե-
ղուացն սխրագործութեանց ոչ գործել
ինչ վասն քո միայն, այլեւ վասն այլոց, զի
առ այն ծնեալ ես դու, որպէս եւ ես եւ ամե-
նայն ոք պատկերակից մեզ։ առ այս յորդո-
րէ և. առաքեալն ասելով՝ մի՝ ոք զանձին և
եթ խնդրեսցէ, այլեւ զընկերին....որպէս
և ես ամենեցուն հաճոյ լինիմ։ ոչ խնդրեմ
զանձին օղուտ, այլ զբազմաց, զի ապրեսա-
ցին։ (Ա. Կորնթ. Գ.Լ. ժ. 24 և 33.
ամենայն ինչ ձեր սիրով լինիցի ԺԶ. 14)։
Ի վեր անդր ցուցաւ, թէ զերկուս կամ
զերիս այսօրածին ցեղանաճագս միաբան-
նեալ մեղուապանին, զնէ ի մի վերՅոակ, և
նոցա անդէն անելով միաբանեալ մատչին

ի զորձ մեղրաշինութեան։ Ցանկալի է ինձ
ասել և վերակրկնել զայս բան ի լսելիս
մեղուասիրիդ առ ի տալ քեզ քաղել զպէտ-
պէս պտուղս շահաւորս միաբանութեան։
կարդա՛ ուշի ուշով զԱստուածաշունչս սուրբ
ասան և զոյես զարմանալեաց արժանա-
ւորս, զի բազմաթիւ այլասեռ գազանք
և անասունք և թռչունք բնականաբար
թշնամիք միմեանց, որք են՝ առիւծ և արջ,
գայլ և ոչխար, շուն և կատու, արծուի
և այլ հաւք, հրամանաւն Աստուծոյ թող-
ին փոխեցին զբնական կարգ իւրեանց ի
նոյեան տապանի, և սիրով գնացեալ վան
օգտի իւրեանց, ազատ մնացին ի համայ-
նաջնջիչ ջրհեղեղէն, և դու աշակերտ գո-
լով Քրիստոսի ո՞չ կամիս միաբանիլ ընդ
ընկերիդ վան օգտի քո։ Լուր անասուն վճռոյ
նախանի փիլիսոփայից, որք ասեն՝ միաբանու-
թեամբ փոքրն մեծանայ, իսկ անմիաբանու-
թեամբ մեծն փոքրիանայ։ այս բան իսկա-

ղուց հէտէ ի բոլոր աշխարհի և յամե-
նայն ժամանակս փորձիւ ծանուցեալ է
ճշմարիտ-սիրեա՛ և դու զմիաբանութիւն,
զի օրհնութիւն տեառն հասցէ ի վերայ
քո և ընկալցիս զկեանան յաւիտենից, որ-
պէս ասէ սաղմոսողն բան, զի՞ բարի, կամ
զի՞ վայելուչ, զի բնակին եղբարք ի միասին
... անդ պատրաստեաց Տէր զօրհնութիւն
և զկեանան յաւիտենից (Սաղմ. ճԼԲ. 1. Զ):
Զօգուտն այսր մշտապաշտելի միաբանաս-
բուութեան յառաջագոյն ծանեաւ և ծա-
նոյց աշխարհի իմաստուն Սիրաք յասէն,
երեք բարեհաճոյացան հոգւոյ իմոյ, որք են
ընտիրք առաջի Աստուծոյ և մարդկան, միա-
բանութիւն եղբարց, և սէր մերձաւորաց,
և առն և կնոջ առ իրեարս համակամու-
թիւն: (Եկղէս. ԻԵ. 1.Զ): Ուրեմն ի վեր-
ատառելոցս յայտնապէս երևի, թէ բարեբաղդ
է այն քաղաք, որոյ բնակիչք զմիաբա-
նութիւն պատուին: Բարեբաղդ է այն

տուն, ուր սէր և միաբանութիւն թագաւորէ, ուր եղբայր զեղբայր սիրէ, ուր ծնողք հոգ ունին զզաւակսն, ուր զաւակք յարգին զծնողս, և այր և կին միաբան կան. անդ օրհնութիւն Աստուծոյ. անդ գովութիւն ի մարդկանէ, անդ երջանկութիւն, անդ ցնծութիւն և ուրախութիւն: Զփոքր աշխարհահռչակ միաբանութեանս այսորիկ էառ մի ի թագաւորաց Վկիւթացւոց, որ մերձ ի մահ գոլով, զութսուն որդիս իւր, որք ժառանգք էին իւրոյ տէրութեան, կոչեալ առ ինքն բազում բանիւք համոզէր զնոսա ի միաբանութիւն տալով ի ձեռս ընտրոցս զանխորտակելի պուրակ բազում գաւազանաց պինդ կապելոց ընդ միմեանս: Մարդ Աստուծոյ, ասէր և դու սիրել զմիաբանութիւն, զի տակաւ յաւելցի, փոքրդ մեծացի, և ընկալցիս, զոր չունիս: Ահա՛ քեզ մեղուասիրիդ զայս խրատ աւանդեն միաբանական իմ մեղուք:

Եւ ես անպրէն զարձայց ի նկարագրութիւն հեռաւեալ իրողութեանց զգուշաւոր մեղուացս ցեղապետութեան։

ԶՄԵՌՆԱՄՈՒՏ ՄԵՂՈՒԱՑ

Յաշնան ժամանակի զզացեալ մեղուաց զմերձենալ ձմերնային ձիւնաճաղիկ ցրտոյն սաստկութեան, արդասաւոր լինն ջանադրութեամբ փութան բերեն զայլ նիւթս՝ որպէս աւանդութիւն է՝ յանուշահոտ աղանդանուէն, յորոց և կազմեն զ ա կ ն ա մ ո մ, և նովաւ պնդեալ ամրացուցանեն զակունս և զծակոյկս փեթակին, և ապա հետ զհետէ զգուռն արկանոցին նոյնպէս մոմապատեալ փոքրիկացուցանեն յանձնապահութիւն ի ցրտահարութենէ և ի դարանակալութեանց վնասաւորաց թշնամեաց, թռչնոց, մկանց, ցեցոյ և այլ սոցին նմանեաց. ի փոքրիկութենէ սատի արկանոցին և ի սակաւ եղբամտից

մեղուացն, զուշակնալ մեղուատեառն, թէ մեղուք իւր ոչ ևս ժուժեն մշակել ի ցրտագին ժամանակի, և շուրջ զիւրև հայեցեալ տեսանէ ի հեռաստանէ զգաղաթունս լերանց՝ ձիւնապատակս, իսկոյն անյապաղ արագաշարժութեամբ ձեռն ի գործ եղեալ փակէ խապառ կուաղանդուած ծեփով կամ լոկ խմորով զարկանոց փեթակին, զոր ապա մեղուքն ի ներքուստ շապկեն, պարապնդեն ակնամոմով, և իբրև անառիկ ամրութեամբ պատապարեալ մնան, ձմերեն ի նմին մինչև ցբարեխառնիլ աւուրց քաղցրաշունչ եղանակին գարնայնոյ։

Ո՞ մեղուասէր, եթէ յուշի ես, զարմանալի հնարխմացութիւն զոմեստաբանեալս մեղուայ, որ քաղէ զզարմանս իմ՝ զարմանալի խրատս տայ և քեզ և ամենեցուն, յորուստ ճոխաբար զզարմանալիս շահիլ կարես։ Մեղուքս անձնապահ լինին ի դարանազործութեանց թշնամեաց

և ի ցրտոյ ձմեռան, ոչ բնաւ կարօտելով
ջերմութեան կրակի, պահեա՛ զայս ի մտի,
մինչդեռ յաշխարհի աստ կենցաղես իբրև
ի ձմեռնամերձ աշնան ի միտ բերել զվերջ
քո, թէ պարտիս երբ և իցէ ըստ տեառնա-
բարբառ. վճռոյն հողադարձութեան ցըր-
տութեամբ ձմերան մահու ամրափակիլ
յարկանոցի բանաւորաց գերեզմանի կնքե-
լոյ խաչիւն սրբով մինչև ցդոչումն տեառ-
նագալուստ փողոյն, ուր բացցի քեզ նոր
գարուն անվախճան կենդանութեան։ Ա-
ռնեմն հոգա՛ վասն հոգևոր կենացդ, պա-
տուպարեա՛, ամրացո՛ զքեզ բարեպաշտա-
կան կենցաղավարութեամբ ըստ հաճոյից
Տեառն Աստուծոյ քում, զի մի՛ իբրև
զմարդ ցրտահարեալ, դող և սարսափ ան-
հնարին կալցէ զքեզ յանաչառադատու-
թեանն ահեղ առնի, և զարանակալ
թշնամին մարդկայինս բնութեան ամենա-
չարն սատանայ ի հարցանել ցրկչին մերոյ

Ցիսուսի Քրիստոսի, ոյր է պատկերս այս-
կամ զիր, իմ, ասելով՝ խրատուացէ զքեզ
յաւիտեան, և տացէ անշէջ հրոյն զեհենի
և արտաքին խաւարին, և անդ եղեցի լալ
և կրճել առատմանց։

Մեղուատէրն տեսեալ զհեռակայ լե-
բանոնն կատարս ձիւնածածկեալ, ժամէ
ի ժամ ապատէ տեսանել զնոյն ձիւնաբերս
և ի սահմանս հայրենի բնակութեան մե-
ղուաց իւրոց։ Հայեաց և զոռ ի մեզէն լե-
բինանմանակիցս քեզ։ երբ տեսանես զմարդ-
մեռեալ և ի ձեռաց մերձակայիցն ամփո-
փեալ ի զերեզմանի, որ նշանակէ գերէ զա-
մենայն, կամ ըստ պարսկականին նշանակու-
թեան զ ի ր զ ա մ ի ն, այսինքն՝ ի ներքոյ
երկրի, զմտաւ ածէ, թէ կանուխ կամ ան-
ազան, այսօր կամ յեղուց պահեալ կոյ
և քեզ նմանօրինակ վիճակ մահաբեր ըստ
անգաւառնալի հրամանի Տեառն և ունիս
գերի լինել զերեզմանի և դնիլ ի ներքոյ

երկրի. փութա՛ ուրեմն պերճ պճնել զքեզ գործովք բարեաց, զի յետ յարութեան մարմնոյդ լուիցես ընդ երջանկացն սրբերամից. ծառայ բարի և հաւատարիմ... մնա՛ւ յուրախութիւն տեառն քո.

ԳԱՐՈՒՆ ՄԵՂՈՒԱՑ

Յապահով և յանկասկած կացս ձմեռեահան լինելն աքանչելարուեստ մեղուքս, և ապա ի զալ գարնան արտաղրին փեթակքն, քակին կուապանգուած ծեփքն, բանին արկանոցքն, և պարկեշտասուն զերդաստան մեղուաց զօրացեալ զուարթացեալ յոյժ յոյժ ընդ պերճանալ եղանակին և ընդ բացադրութիւն ձիւնախաղաց ցըրտութեան, ուստն ծախեն սակաւ առ սակաւ զի վեր անդր նախապատմեալ իւրաքորջ ակնամանն առ ընդարձակել զճանապարհ երթևեկութեան իւրեանց և բանալ զլուսամուտս յարկաց իւրեանց. ապա

երբեւ ի վեհաւորի սաստիկ հրամանէ շար-
ժեալք մատչին ի մաքրել և ի սրբել զփե-
թակսն ի ներքուստ, զփերփս կատարիչս
Տակուակաց մեզ զ ր ա հ ա ց ի ց, զորս ի ձմե-
ռան կերեալ են, զատակեալ մեղուս. զորս
յետ կոյս փեթակին ժողովեալ են. և զկո-
տորակս մաղի կամ բաճի անկեալս ի փե-
թակին, արտաքերեալ թափեն յարկանոցն,
և յետ ամենայնի ի սրբափայլ բնակարանի
անդ թխեալ ծնանին զբոռոս։

Սիրական մեղուասիրիդ ահա զհաւա-
տոյն քարոզեն շքեղապար իմ մեղուք.
ի ձմեռնահան լինիլ նոցա՝ ծեփքն քակ-
տին, արկանոցքն բանին և ինքեանք ի խնա-
մակալուէն իւրեանց երբեւ ի կոչողէ ար-
տաքս ելանեն ի փեթակացն, յորս յերկար
ժամանակս ձմերեալ էին. այնուհետեւ ոչք
նոցա ընդարձակին. թեւք սրանան, ուր և
կամին. թէ ի վեր և թէ ի վայր, և ինքեանք
ժրացեալ ժողովին զհիւթս հիւթս յա-

նուշահոտ ծաղկանց առ ի կազմել զմեղը
ախորժաճաշակ։ Եւ արդ՝ զի՞նչ այլ ինչ
կամիցի այս ամենայն յայտ առնել, եթէ
ո՛չ զքո մարմնոյդ յարուցեան ի գերեզ-
մանէ յանձին բերին զտիպ, զի երբ ցէր
հրամանաւ ի ձայն հրեշտակապետի և
ի փող Աստուծոյ իջանէ յերկնից, յոգ-
դեցուցեանէ անտի փողագոչ ձայնին, թէ
արի՛ք մեռեալք, եկայք ի դատաստան՝ քա-
կտեսցի հողանուէիցեայ յարկ տապանի քո,
այսինքն բացցի գերեզմանդ, յարիցես
ի մեռելոց, երիզապինդ ոտիցդ տացի աղա-
տաքայլ ընդարձակութիւն, և երթիցես,
ուր գործք քո ածցեն զքեզ, եթէ բարի են
գործքդ, յաւիշտակեսցիս ընդ առաջ ցե-
առըն յօդս, և այնպէս յամենայն ժամ
ընդ ցեառն լինիցիս հրեշտակացեալ հիւա-
նալի կենօք և անանց խնդութեամբ, որպէս
հաւատարիմ բանք են սուրբ գրոց։ Իսկ
եթէ չար՝ վայրասուզեալ իջցես ի դժոխս,

որպէս ձմեռնամեռ մեղուք ընկեցիկ լինին
ի դժոխս արկանոցին։ Խնդապնդեսց ու-
բեմն ասէն իսկ մաքրել զքեզ յամենայն
աղտեղութենէ, զի ի գալ կենդանարար
զարնան մարմնոյդ յարութեան, եղեցիս
սրբեալ յաղտոյ մեղաց բնակարան Տեառն
Աստուծոյ քում։ Եթէ մեղաւ, մի՛ զար-
հուրիր. եթէ վերաւորեցար ի սատանայէ,
մի՛ երկնչիր բնաւ, զի կարես ապաշխարու-
թեամբ ջնջել զսպիսդ մեղաց, և որպէս
վերաւորեալ զինուոր առողջացեալ ի վերայ
անտի պատահելոյ լինքեան ի պատերազմին
ընդդէմ թշնամեայ, ընդունի զպարգևս
ի թագաւորէն իւրմէ, նոյնպէս և դու
զինուորդ Քրիստոսի ապաշխարութեամբ
բժշկեալ ի սատանայատուր վերացդ՝ ըն-
կալցիս անխաբ յուսով զվարձ յերկնաւոր
թագաւորէն, վասնորոյ և ես ասեմ, ամէն,
եղիցի, եղիցի։

ԲՈՌՔ

Բոռքն՝ որպէս բանք են՝ թխսեալ ծըն-
նանին զձագս. յելանել յառաջնաձագուցն
ի փեթակական աէրուբթինէն, կան մնան
բոռքն ի կոցի իւրեանց իբրև հարկաւորք
վասն ծննդագործութեան յետնաձագուցն,
այլ իբրև ելանեն երկրորդական կամ եր-
րորդական ձագքն, ոմանք ի նոցանէ ի միա-
սին ընդ ձագուցն ելանեն արտաքս, և կէս-
անդէն առ եռեղ մնան ի նախեղակ փեթա-
կի իբր ի պաշտամանս ձագածնութեան.
ի աեղաւորիլ ուրեք ելեալ ձագուցն, իսկոյն
անդթութեամբ ինն յարձակեալ ի վերայ
կոտորեն զբոռս, զի մի՝ իբրև աւելորդք և
անաշխատք կերիցեն զմեղը նոցա, և ապա
ըստ ծխի յուզարկաւորութեան իւրեանց
հանեն զդիակունս նոցա արտաքս ի գե-
բեզմանատուն արկանոցին. իսկ որք մնա-
ցին ի փեթակին ձագածնութեան նոյնպէս

մահ ստացեալ ի մայր մեղուաց ձագարաձակ փեթակին բերին առաք փառաքյարկանոցին դուռն ի գիակոյտ ժողովարան հասարակաց։

Տես մեղուասէր, տես քանի՞ քանի զարմանալեաք սիրացուցանեն զքեզ այսորինակ արարք մեղուացս։ տեսանեն, զի բառք չեն իւրեանց նման, այլ այլակերպ, յարուցեալ ի վերայ նոցա սպանանեն զնոսա և բառնան յերեսաց երկրի զայիշատակս նոցա։ սպան և դու զառաջնածնօղն Աստուածընդդէմ մեղաց, զի մի՛ ծնցի ի քեզ և զայլ մեղս։ դու դիտես, զի պատկեր ես Աստուծոյ, բարո՛ւք։ իսկ այդ՝ պատկերակիցդ Աստուծոյ լինել զի՞նչ է, եթէ ոչ ըստ իմաստնոյն Սողոմօնի ճշմարտութիւն և ուղղութիւն, ըստ այնմ՝ զայս ահա՛ գտի, զի արար Աստուած զմարդն ուղիղ։ (Ժող. Է. 30)։ Իսկ ըստ առաքելոյն Աստուծոյ սրբոյն Պօղոսի՝ որ մի և նոյն է՝ արդարութիւն և

արքութիւն ճշմարտութեան, ըստ այնմ թէ՝ և զգենուլ զնոր մարդն, որ ըստ Աստուծոյն հաստատեալ է արդարութեամբ և արքու-թեամբ ճշմարտութեանն։ (Եփես. Դ. 24)։ և այլն։ Ապա քէն՝ եթէ ուղիղ ասելծար, զանուղղութեան ապան զմայրն, զհպարտութիւն, զի «Հպարտն կամելով զերա-«զանցել զամենեքումբք, ցաւի, եթէ ոք «կամի հաւասարիլ նմա, և ըստ այնմ ծնանի «ի նմանէ նախանձն. իսկ նախանձոտն՝ զի «դիւրաւ բարկանայ այնմ, ընդ որում նա-«խանձի, նմին իրի ծնանի ի նմանէ բարկու-«թիւնն. և բարկութիւնն վասն ոչ կա-«րելոյն առնուլ զվրէժ սրտի, վասնայսորիկ «ի բարկութենէն ծնանի ծուլութիւն և «տրտմութիւն. իսկ տրտմութիւնն խնդրե-«լով զմխիթարութիւն, առնէ ագահ. իսկ «ագահութիւնն, զի յոփանայ ժամանա-«կաւոր ընչիւք, պարապի յորկրամոլու-թիւն. իսկ որկրամոլութիւնն վասն խաճոյկ-

լոյ զորովայնն, որոյ զզղջախոհութիւն։ Ո՛ բարեմիտ մեղուասէր, տեսանՔ արդեօք, թէ ո՞րպէս մեղ.ք զմեղս ծնանին, ուրեմն ուսէր և դու ի բուռատպան մեղուացս զաւելորդն բացամերժելի քէն, և թլփատել զանթլփատութիւն սրտի և ամենայն զդաստարանացդ. ապա՞ այսուհետև. . .զանդամս քոզերկրաւորս. ի բաց ընկեցզպոռնկութիւն, զպղծութիւն. զբիծ, զանկութիւն չարեացն և զապահութիւն՝ որ է կռապաշտութիւն։(Կողոս. Գ. Ե)։ Եւ մի՛ այսուհետև թագաւորեցին մեղ.ք ի մահկանացու մարմնի քում՝ հնազանդիլ ցանկութեանց նորա։ (Հռովմ. Զ. 12)։

ՊԱՏԵՐԱԶՄ ՄԵՂՈՒԱՑ

Մեղուք միոյ զբքատեառն յանկարծ ի վեր քան զանկալութիւն մարդոյ խանդարեալ զբարեկարգութիւն միաբանութեան ի բնանց և ապաղործ թողեալ զզոր-

ծարան մեղրատրծութեան, զօրաժողով
լեալ շուն խաղան, գնան խումբ խումբ
կատաղի յարձակմամբ ի մարս պատերազ-
մի ընդդէմ մեղուաց օտարաց. և այս մար-
տապրութիւն նոցա լինի սովորաբար յաշ-
նան ժամանակի կամ ի գարնան, և որք ա-
ռաւել ճոխքն են կամ հարուստք մեղերբ
կամ վայրենիք և կամ քարաբնակք և ծա-
ռաբնակք, այսինքն ի ծոցաւոր տեղիս լի-
րանց և ծառոց բնակեալք և վայրենացեալք
և ամենահացեալք, առաւել յաղթօղ հան-
դիսանան յապարձիլն անդ բռնամարտու-
թեանն մինչև ասել զզարմացուցն մար-
դոյ. իսկ որոց սակաւ է մեղրն, թոյլ են և
պատերազմօղքն, նմին իրի և ոչ կարացեալ
յարտաքսակն մրցութեամբ զկէմ ունել
անդրդրոյն կատաղութեան և անուանձելի
կամակորութեան օտար մեղուաց, տակաւ
առ տակաւ ի պարտութիւն մատնին փու-
թանակի, յորոց ոմանք անդէն առ եռեղ

ի գաշտին Ճակատամարտութեան անկեալ թաւալեալ համբուրեն զմահ, և այլք զերեսս դարձուցեալ ի փախուստս, զեզեալ սատանդրեն զտանել ինքեանց զքաղաք ապաստանի։ Յաղթակատացն տեսեալ զընկիճումն, և զտուայտանս, և զուժգնութիւնս պարսիցն, սրարշաւ բերմամբ գրոհս տուեալ յարձակին անտանելի կատաղութեամբ ի մեզսահացս նոցա, և յաւար և յաւեր հարեալ զբնակարանս նոցա, խլեն բառնան և տանին զմեզը նոցունց թողեալ զատարկ զզեզատեսիլ բճիճան յոզորմելի զրութեան։ Սատանելոցս և տատամսելոցս այսոցիկ տեսեալ, թէ արհաւ իրք մեծամեծք ներքոյ և արտաքոյ պաշարեալ տիրեցին ինքեանց բազմապատիկ բզզանձն հառաչմամբ յօդնութիւն կոչեն զտէր իւրեանց զմեզուապանն, այլ ի զուր. զոչեն որքան և ուժեն, այլ չարպատահութիւն նոցա զամ քան զզամ սատականոյ, և ոչ բնաւ զիւրի

ըստ Նարեկացւոյն, թէ ի զզուշանալն առաւել՝ յաւէտ ճեռասեցայ.... ի փոքունցն փախուցեալ, մեծամեծացն մատնեցայ. և վիանգամայն չէ ոք, որ հասցէ յօղնութիւն նոցա. ընդ բզկաձայն ազաղակ նոցա ոչ այնքան արագահաս լինի նոցա ի թիկունս աէր նոցին. և ոչ այնքան անձնդիւր լինին նոքա, որքան ճեռաս կրին, զի այլ ևս օտար մեղուք առեալ զհոտ մեղուն նոցա յափշտակելոյ ի թշնամեաց, համաժողով բազմութեամբ գան հասանեն, յօղնութիւն յաղթողացն խմբի, ընդ որս և նոքա աւարեալ զմեղը ի փեթակաց ընկճելոցն բառնան տանին և արկանեն ի շտեմարանս իւրեանց փեթակի յաճախ և սրարշաւ երթևեկութեամբ : Ցայսօրինակ բռնագրաւութենէ յաղթական մեղուացն երբեմն ամբողջ դիրք մի, որ պարունակէ յինքեան ի հնդից մինչև ցհարիւրաւոր փեթակս հանդէս ի այսինքն՝ չը.քանայ առ պակա-

աւելեան մեղուս, որով անանիկ պարտ է մեղուականին գերդաստանի, և մնայ ի նոսին կենդանի և ոչ մի այլ ամենեքին նուաղեալ ի համատարած սովուն սաստկութենէ վաղամահ լինին և ընուն զփեթակն դիակամբք իւրեանց և հողեվարօք, և այլ չմնայ որ ինոցանէ, որ զդիակունս փառաւորապէս ըստ մեղուականին ծիսի յուզարկաւորեցէ յարիանոց ճաղակորոյս գերաշխարան և սգաւոր փեթակին։

Բարեշնորհ մեղուասէր, զի՞նչ արդեօք լոյէ կենցաղս, եթէ ոչ ապարէզ պատրաստի. եթէ մեղուք պատերազմին ընդ օտար մեղուս, ասի հարկաւ զհետ դայ թէ՝ և զինուորին Աստուծոյ պատերազմիլ ընդ թշնամւոյն սատանայի չէ անդանելի, այլ կարի ճահաւոր և յաւէտ դոլիլի, զի սատանայ ըստաւմենայնի ջանահնար եղեալ զտիւ և զգիշեր, շրջի և խնդրէ, թէ զո՞վ կլանիցէ. ուրեմն փութա՛, պարարտացո՛

զքեզ գործովք բարութեան, զի ի հակառակամարտութեանն անդ ապարիզի անպարտելի մնայես ի թշնաւոյն։

Սեղուք, որք հարուստք են կամ քարբնակք, առաւել քաջասիրտք են և յաղթող քան զայլս ընտանեկանս. յայսմանէ խմաստասիրեա՛ և ծանիր, զի եթէ հարուստ ես առաքինական գործովք, ոչ երբէք կարէ սատանայ արկանել զքեզ յորոգայթս իւր. և եթէ քարբնակ ես, այսինքն յամուր վայրի ի վերնագաւառ բնակութեան երկնից պատրաստեալ ունիս քեզ յաւիտենական բնակարան, յաւիտեան յաւիտենից ոչ կարէ մերձենալ ի քեզ դող և աւար հարկանել զքեզ և զբնակութիւն քո, և դու թէև միշտ յաշխարհի սատ հանդիպեսցիս փորձութեանց նորա, սակայն միշտ յաղթեսցես նմա անուամբն Քրիստոսի, զի մեծ է անուն Նորա, և անառիկ՝ ամրոցդ, յորում ամրա-

ցեալդ ես ըստ օրինակի ճաղար կենդանւոյ, որ շինէ զբոյն իւր յանմատչելի վէմս և ի գագաթունս բարձրաբերձ լերանց, զի մի՛ կարիցեն թշնամեացն հասանել ինա ձեռք։ Ո՞վ էր, որ յաղթեաց մարմնոյ և աշխարհի, և ոչ կարաց յաղթել սատանայի. յաղթեա՛ մարմնոյդ բռնութեան, յաղթեա՛ ունայնութեանց աշխարհի, անշուշտ կարես և յաղթող սատանայի լինել և խրախաձայն ասել ընդ Քրիստոսի՝ քաջալերեցարո՛ւք, զի ես յաղթեցի աշխարհի։ այլ զգո՛յշ լեր, զի մի՛ յաղթեցեն քեզ և աշխարհ, և մարմին և սատանայ. եթէ յաղթեցիս, զրկանք մեծ հասցէ քեզ ըստ մեղուացն զրկանաց, զի հեռացի ի քէն Աստուած, հրեշտակք և ամենայն սուրբք դարձուցեն ի քէն զերեսս իւրեանց, և ամենայն ոք արհամարհեալ զքեզ ասասցէ, ալէՀ, զինո՞ր զատաւնատաւ մեծացեալ քաղաքն բազմաժողով. և եղև իբրև այրի լցեալ տրտմութեամբ

ի մէջ հեթանոսաց. իշխան աշխարհին եղև հարկատու։ (Ողբ. Երեմ. Ա. 1)։ Եւ զի՞նչ քեզ յայնմհետէ, եթէ ոչ, միայն ընդ նարեկեան զուարթնոյն զոչել՝ «զողացան օտարքք չարին զումարքք զատացուածս սրտիս իմոցս՝ ըստ զրոյն կանխաբանութեան, որով ելին ելհաս իսկոյն առատնօր իմաստութեան ինձ նուազանալ ըստ առակողին, և առաւելուլ ոչ բարւոյ ցանկութիւն։ (Նարեկ. ԾԵ)։

Մեղուաց՝ որոց սակաւ է մեղր, սակաւ է և զօրութիւն ի պատերազմի ընդդէմ բռնամարտակաց. այնպէս եթէ սակաւ են գործք բարեաց մեղուասիրիդ, սակաւատև է և ոյժդ ի պատերազմիլն ընդ թշնամւոյն սատանայի. նմին իրի երբ և իցէ մատնեացիս ի պարտութիւն, և նա յաւար հարեալ զքեզ, թողցէ զբնակութիւն քո աւերակ, զի մի՝ ելս բնակեսցի ի քեզ Աստուած. ուրեմն արժանէ քեզ բազմապատկել զգործս

բարեաց պարծանաց առ ի յօրինել զքեզ ամենայն մասամբք բնակարան շնորհաց Տեառն Աստուծոյ։

Եթէ առ պակասութեան մեղուս հանդէպ չին չքանան բազմութիւն վերթակք ի դիրս մեղուանոցին. ապա առ պակասութեան իւղոյ բարեաց դործոց շինցի և քոյդ կենաց լապտեր ըստ յիմարաղաս հնդից կուսանացն անիոյթութեան և անպատրաստութեան, և ի մտանել երկնաւոր փեսային բազումս աղաղակեացես՝ Տէր Տէր, բաց ինձ. այլ այս ձայն ողորմագին աղաղակաց քոց նանրացեալ մերժեալ յերեսաց Տեառն, ի ծոց քո դարձցի ոչգիտական պատասխանեաւն հանդերձ, և ըստ շինչելապատերութեանդ բացցի քեզ ոչ առագաստին՝ որում անարժան ես դու, այլ դժոխոց դուռն, որպէս յաղաղակաց մեղուացն ոչ այնքան տէր նոցա հասանէ յօգնութիւն, որքան այլ ևս թշնամիք բազմանան և վը-

նաս ՀԼԱՍՈՒ զնոքօք թափեն, սոյնպէս և զու անօգնական մնացեալ ի զրունս անդ զժոխոց լուլցես միայն ի սաղայէլէ զայս ձայն, թէ այս այն այր է, որ ոչ արար զԱստուած իւր օգնական, եկայք հալածեսցուք և հասցուք նմա, զի ոչ ոք է, որ օգնեսցէ նմա։

Երբեմն դիպուածով իւիք, կամ ըստ ազգարարութեան ուրուք ի դրացեաց իբրև զայ մեղուատէրն և տեսանէ զխրոխտ մարտադրութիւն մեղուացն, միանդամայն և զպարտութիւն իւրայնոցն, և զանփրկանաւորութիւն նոցա յերեսաց յանդուգն յարձակմանց և յամենատատիկ կատաղութեանց հզօր հակառակորդաց, խակոյն զգլուխն տարուբերելով համակի յարտասուս, և երբեմն ի յանկարծ տեսանելն զայն աղէտս մեղուաց իւրոց՝ ուշաթափ անկանի յերկիր, և ապա յետ միջոցի ինչ յուշ եկեալ և գիտացեալ հաւատաւոր, թէ օ-

տարքն թափեն զոգիս իւրոց մեղուաց, և փոքր միւս ևս և ունի խոպառ հանդչիլ բազմափեթակ դիրք իւր, նոյն հեռայն ա-բաղընթացութեամբ ինն վաղեալ ջուր բերեալ ի տանէն փչէ զպատերազմօղքն յարկանոցի անդ յելանելն նոցա ի վեթա-կացն խուռն բազմութեամբ, և ապա մինչև ցթռչիլ նոցա ցանէ զնոքօք զալիւր կամ զմոխիր, առ ի ճանաչիլ թէ որոյ են մե-ղուք հարուածօղք իւրոյն, և ինքն ածա-պարեալ դիմէ զնայ ի դիրս ամենայն դրա-ցեաց իւրոց առ ի հեռախոյզն լինել և տեսանել, թէ յոյր մեղուանոց մուտս առ-նեն նշանաւորեալքն ալերբ կամ մոխրով, իբրև գտանէ զդոպս իւր, դիմէ սրընթա-ցութեամբ առ տէր նոցա և ասասնդեալ որոնէ և գտանէ զնա և բեկ բեկ ձայնիւ պատմէ նմա մի ըստ միոջէ զամենայն անցան անիրաւութեանց և զկանաց՝ զորս հասու-ցեալ են և հասուցանեն մեղուք նորա իւ-

բուն մեղուանոցի, և յետ բազում անգամ յոգւոց հանելոյ և ախուվուշ առնելոյ աղերսահայց ի նմանէ լինի, ի սէրն Աստուծոյ բարեհաճիլ փութով յոյժ ձեռն ի գործ դնել վերաւորել զամեհացեալ մեղուս իւր հատամամբ մեղրահացից նոցա, զի նոքա պարապեալ ի բուն գործս իւրեանց ի համակերտութիւն նոյնպիսեաց, դադարեսցին ի կատաղութեանց և ի բազմամիտ սաբեր զբիղոզութեանց և ի հաուցանելոյ զմահ կենաց իւրոց մեղուաց։ Եթէ տէր յաղթականացն կամակար մաօք յանձն առնու կորիլ կամ ճեղքիլ և կամ ծակիլ զմեղրահացս իւրոց մեղուացն, աղերսահայցն գիտէ հաւատեալ, թէ ունի խաղաղութեամբ վերջաւորիլ մարտն, և նեղսակրեալ մեղուք իւր փրկեսցին յատպատակութենէ և ի նեղութենէ հակառակամարտից։ Իսկ եթէ ոչ յօժարի բնաւ վերաւորիլ զիւրան, իսկոյն վերաւորեալ մե-

զուատէրն զայրացեալ յոյժ յոյժ, և ժամ յաջողակ դաեալ, ծածկապէս ձեռնարկէ ի դառն վրէժխնդրութիւն, այսինքն՝ կնճռեալ կերպարանօք և արագ կրճմամբ ատամանց յառաջ մղեալ զանձն իւր ի փեթակս անդ յաղթողականացն, և սուր շամփուր արկեալ ընդ արկանոցս բոլոր փեթակացն՝ յորս բնակութիւն է մեղուաց զրկողացդ, քայքայէ և վեր ի վայր կործանէ զքաջերևոյթ մեղրահացս նոցա, խանդարեալ շփոթէ զանպարտաւ կարգաւորութիւն զուլեստաբանեալ կառավարութեան նոցա, զոմանս վիրաւորէ շամփրովն, զոմանս կոտորէ և մեղրաշաղախս առնէ, և զայլս՝ որք զելլեմուտս առնեն ի դրունս արկանոցին՝ ի սատիկ զայրութէ սրտին շարժեալ ի բարկութիւն ոտնակոխս առնէ և հողոյ հաւասարէ։ Եւ այսպէս խառնուփնդոր եղեալ մեղուք ընդ մեղեր և դարձընթաց լեալ ի զրկողութեանց, եթէ սատիկ է վէրքն՝

սատակին ամենեքին. իսկ եթէ թեթև՝ կենդանի մնացեալքն միաբանեալ ի քաղաքական հասարակապետութեան և ի տնտեսական կենակցութեան իւրեանց, պարապին վերատին ի վերանորոգութիւն ցաւելի աւերակաց իւրեանց։ Պատահիերբեմն. զի օտար մեղուք առեալ զհոտ մեղու նոցա համախմբեալ յարձակին պատերազմաւ ի փեթակս նոցա և վնասագործ լինին նոցա, որպէս եղեն նոքա այլոց։

Ահա՛ քեզ մեղուասիրիդ նոր հանդիսարան հոգեշահ բարեաց բանան զարմանադործ իմ մեղուք, յորուսա քաղել կարես հոյլս հոյլս պիտանաւոր խրատուց։ Վերաւորեալ մեղուք ձեռնբարձ լինին ի ճնասելոյ այլոց և ի հասուցանելոյ զչար ուժեք, և պարապին ամենայն արիականութեամբ ի վերանորոգութիւն աւերակաց հայրենեաց իւրեանց. Զանդիր և դու հեռանալ ի չարէն և զխանդարեալդ մեզօք

պատկեր Աստուծոյ նորոգել ապաշխարութեամբ։ Յետ վերաւորելոյդ ի թշնամւոյն ստուգանայէ մի՛ խոպառ յուսակտուր լինիր, մի՛ զարհուրիր ի մեղացդ, մի՛ վախիր բնաւ, և մի՛ ասեր, թէ չէ՛ք հնարք վերականգնման, զի այդ միայն անմարմնոց հրեշտակաց է գործ անկանիլ և չկանգնիլ, որպէս և եղև խակ. գործ մարդոյ բաղկացելոյ ի հոգւոյ և ի մարմնոյ է անկանիլ և կանգնիլ ապաշխարութեամբ՝ որպէս ասաց երջանիկ ոմն։ Ուրեմն սիրելի, յուսա՛ յամենահնար կարողութիւն ամենազօրին Աստուծոյ, զաղարեաց ի չարեացդ ենածաղիկ սովորութենէ, և ահա՛ դու քեզէն քեզ անտարակոյս զատձառեցեալս զվերականգնումն ցանկալի հրեշտակաց, որք ուրախանան վասն միոյ մեղաւորի։ որ ապաշխարիցէ ըստ հաւասատութեան սուրբ գրոյն։

Օտար մեղուք յարձակին երբեմն ի զբըկողն, և վնասահատոյց նոցա լինին, որպէս

և նոքա այլոց մեղուաց եղեն. և դու պա-
տուելի մեղուաւէր միշտ պահեա զայս ի
մտի հաստատուն, զի զոր ինչ կամիս, թէ
արասցեն քեզ մարդիկ, այնպէս արա և դու
նոցա: Մեղուք միոյ դրքատեառն զրկանս
հատուցին մեղուաց այլոց. իսկ միւս ևս մե-
ղուք օտարին վրիժագործ զրկողացն ցու-
ցան: Եթէ բարի արասցես ումեք, անշուշտ
բարիք հատուսցին ի գոգս և ի գիրկս քո.
իսկ եթէ չարիք ումեք նիւթեսցին ի քէն,
առանց կարծեաց՝ որով չափով չափես, նա-
վին չափով չափեսցի և քեզ ըստ առաքե-
լական բանից՝ ճշմարտութեան, որ ասէ՝
եթէ զմիմեանս խածատիցէք, և ուտիցէք,
զգո՛յշ լերուք. գուցէ ի միմեանց սատակի-
ցիք: (Գաղատ. Ե. 15:) Եթէ բարեմտաց
առ բարեբարոյ գայիս, ապա և քոյդ բա-
րիք ի չարիս փոխեսցին վասն քո: Ա-
ստուած շարժի իրրև զկրիայ, և զատաւէ
իբրև զառիւծ. Աստուած վասն չարախօս-

սութեանդ զուսմեքէ, թէև առժամանակ
մի համբերէ, այլ երբ կամք ելցեն նմա յա-
րուցէ զոք չարախօսել զքէն։ վասն խաբե-
բայութեանդ հատուցի և քեզ զրկալիր
խաբեբայութիւն, զի զրեալ է, հատուցէ
նոցա ըստ գործոց նոցա։ և ըստ
չարութեան նոցա կործանեցէ զնոսա Տէր
Աստուած մեր։ (Սաղ. ՂԳ, 21։) Եթէ զոք
զըպարտեցես, ծանիր հաւատեաւ, թէ
դու ևս ոչ կարես ազատ մնալ ի զըպարտու-
թենէ։ եթէ մորոս կոչես զերդբայր քո,
պարտական մնացես հրոյն զեհենի։ եթէ
արատաւորեցեր զանարատն, զինչ շահ քեզ,
ոչ ապաքէն զնոյն շահեցիս և դու, զի զը-
բեալ է, որ արկանէ քար ի բարձունս, ի վե-
րայ գլխոյ իւրոյ անկցի։ մե՛ղք է քեզ զա-
զանին պատուհասել և զաղուաւն անպա-
տիւ թողուլ, որոյ վասն Աստուած զսուր
իւր սրեալ է և զաղեղն իւր լարեալ և զնետս
իւր այրեցեալ։ քէ գործեալ, որպէս ասէ

գիր։ Ուրեմն՝ զզոյշ լիր յանիրաւի չզբկիլ զոք, չբամբասել, չխռել և չվերաւորել ի տարապարտուց, զի մի՛ և այլք նոյնօրինակ կշռութեամբ փոխահատոյց քեզ լիցին, և յահաւոր առնին Քրիստոսի լուիցես զայս ձայն ահապատառ սրտիդ՝ հասին մեղք նորա մինչև յերկին, և յիշեաց տէր զանօրէնութիւնս նորա. և հատուցէք դմա, որպէս և հատոյցն ձեզ. և առցէ դա երկապատիկ ըստ գործոց իրոց. և զբաժակն՝ որով խառնեաց՝ խառնեցէ՛ք դմա կրկին. և որչափ փառաւորեաց զինքն, և խայտաց, այնչափ հատուցէ՛ք դմա զսուգ և զտանջանս, զի ի սրտի իւրում ասէր՝ եթէ յամենայն ժամ նստայց ես թագուհի, և տրի՛ ոչ ես եղէց, և զսուգ ոչ տեսից. վասնայսորիկ ի միում աւուր եկեսցեն ի վերայ դորա հարուածք, մահ և սուգ, և սով, և ի հուր այրեսցի, զի հզօր է Տէր Աստուած, որ դատեցեալ զնա. (Յայտ. ԺԸ. 5. 6. 7. 8)։

Այլ եթէ զժկամակեալ տեսուն յա-
փշտակարար մեղուաց՝ ոչ համաձայնեցի
քնաւ իւիք իրօք վերաւորել զիւրան, և սան-
ձել զկատաղութիւն նոցա և զվնասաս-
ուութիւն, և մինչև ցվախճան մեղուակա-
նին զարմանալի պատերազմին աչալուրջ
հսկողութեամբ զգուշացի իւրոց փեթա-
կաց, զի մի՛ ձեռք օտարաց գաղտագողի
մտեալ՝ վերաւորեացեն զիւր մեղուս, յայն-
ժամ աղերսահայցն տեսեալ թէ չի՛ք այլ
ևս ճար և հնար վերաւորելոյ զնոսա, քանզի
զզոյշ է տէր նոցա, վազս առեալ դէպ ի
մեղուանոց իւր, գտանէ զայլ եզանակ հնա-
րիւ վնասելոյ ի սպառ ամենեցն զնդի,
զսպելոյ զբռնութիւն նոցա, բառնալոյ յե-
քեսաց երկրի զկենդանութիւն նոցա և ա-
զատ պահելոյ զիւրան ի մօտաւուտ չարեաց
և ի չարաչար վտանգեցն, զորս ի նոցունց
կրեն իւրքն. և ահա վերջին հնարքն նորա,
զոյց հնարքն զարմանալի, զի անխաբ յու-

սով. զփեթական իւր՝ յորս զրոհ տուեալ մոտանեն օտար մեղուք ի յափշտակութիւն մեղու, բառնայ ի զրկից իւրոց. և զնէ՝ յայլ տեղւոջ ի թագաւորան, իսկ յայլ դատարկ փեթակս արկեալ տակաւ ինչ մեղը զնէ ըստ նախնեղակ շարակարգութեանն ի տեղիս թագուցելոցն. և իբրև զող մեղուքն ըստ առաջնոյն իրոխտալով վերատին գան մոտանեն յայնս, կարծելով թէ մոտանեն ի փեթական՝ զորս առին պատերազմաւ, և պարապին ի բարձուն մեղու նենգութեամբ անդր եղելոյ, նոյնժամայն զայրացեալ տէրն պինդ կալեալ կապէ զարկանոցն, և տակաւ հուր արկեալ ի նոսա այրէ զամենեսին, որով և վրիժահան լինի յանլուր զրացւոյն իւրմէ, և յետ այսր ամենայնի յապահովել կացուցեալ զիւրսն յերեսաց անտի անգութ ներգործութեանց օտարին մեղուաց բերեալ զնէ խայտալով զթագուցեալ փեթական ի ճանճանոցի իւրում. զայսպիսի

ապահովութիւն գտեալ նեղելոցն փու-
թան դարձեալ ընուլ մեղու զդատարկեալ
մաղս իւրեանց։

Մեղուատէրն արթուն հսկողութեամբ
զգուշանայ պահպանութեան մեղուաց
իւրոց, զի մի՝ թշնամի ոք վէրս ինչ կամ
ճեաս հասուցէ նոցա։ Ցուցակ է այս արթուն և անձնադիր հովուաց եկեղեցւոյ, որք պարտին տքնիլ ի վերայ հօտին պահպանութեան առ ի չտալ թոյլ օտարաց, կամ ապստամբելոց և սուտ վարդապետաց, մերձիլ ի հօտ անդր Քրիստոսի և սաերիւր մեկնութեամբք և թիւր վարդապետութեամբք ապրդեալ մուծանել ի նոսա զհերձուածս կորստեան։ (Բ. Պետ. Բ. 1)։ Զի իսկական պարտաւորութիւն է հովուաց զգոյշ լինել հօտին, յորում եդ զնոսա Հոգին սուրբ տեսուչս. Գործ. Դ. 28. քարոզել զբանն, հաստանել ի ժամու և տարաժամու։ (Բ. Տիմ. Դ. 2). վերակացու լի-

նել հաւատարիմ բանին վարդապետութեան (Տիտ. Ա. 9). և ընդարձակ բանիւք բացէ ի բաց հերքել զչար հերձուածս վերերևեալս ի ժողովրդեան Քրիստոսի հակառակ բանին Աստուծոյ, զի մի՛ ոք զքրիստոսական զառանցումսցէ պատիր բանիւք։ (Կողոս. Բ. 4)։

Վնասընկալ մեղուաւէրն տեսեալ թէ դրացի իւր ոչ յանձն առնու իւիք իրօք անձել զգազանաբարոյութիւն իւրոց մեղուաց, ինքնին յիւրոց մտաց ստեղծանէ զզեղջկական նոր հնարս դաղարեցուցանելոյ զամեհութիւն կատաղելոցն։ Այս հընարիմացութիւն նորա ուսուցանէ քեզ, մեղուաւէր, զի եթէ զմարմնոյդ բնութեան ինքնաբեր կատաղութիւնս անսանձելի տեսանես, բուռն հար զայլ հնարից առ ի կարձել նուազել զպարսաւելի խորհուրդս նորա և ներգործութիւնս, զի մի՛ ի գալ առաւել տեառն իրրև զգող. յորմէ երկինք

տաղնապաւ անցցեն, և բնութիւնք հրով կիզեալ լուծցին (Բ. Պետ. Գ. 10) յայտնեսցին ամենայն գործք քո, և ապականեալ յօժարութիւնք մարմնոյդ կամաց, և ընկալցիս զանվախճան պատիժ պատուհասի զՀուրն յաւիտենական և զտանջանսն յաւիտենական: (Մատ. ԻԵ. 41): Ուստիր և ծանիր հաւատարաւ, զի ըստ առաքելոյն բանի, խորհուրդ մարմնոյ մահ է, և խորհուրդ հոգւոյն կեանք և խաղաղութիւն. քանզի խորհուրդ մարմնոյ թշնամութիւն է յԱստուած, զի օրինացն Աստուծոյ ոչ հնազանդի, նաև կարէ իսկ ոչ. զի որք մարմնովն են, Աստուծոյ հաճոյ լինել ոչ կարեն.....զի եթէ ըստ մարմնոյ կեցջիք, մեռանելոց էք. իսկ եթէ հոգւով զգործս մարմնոյ սպանանիցէք, կեցջիք: (Հռովմ. Ը. 6. 7, 8, 13):

Մեղուատէրն առ ժամանակ մի ի թագստեան պահեալ զիւր մեղուս ներգեալս

յերեսաց չարագործութեանց և անիրաւութեանց օտարաց, ապա ի հրով դատելն պնոսա, ի լոյս ածէ զիւրսն խնդալով և դնէ փառաւորապէս ի մեղուանոցի իւրում։ Այսպէս որք քրիստոսեանքն են, պարտին ի չարչարանս և ի հալածանս կալ ինալ առ ժամանակ մի, այսինքն յաստուծոյ յերեսաց ամբարշտաց և մեղաւորաց, զի զովի մեղաւորն ի ցանկութիւն անձին իւրոյ, և որ զրկէն և նա զովի։(Սաղ. Թ. 23)։ Այլ յանտուտ մեծապարծուն ամբարիշտք ինքեանն ի գժոխս ի հուրն անշէջ. և հալածեալքն վասն արդարութեան վայելեսցեն յանկողոպտելի երջանկութեան, ըստ այնմ՝ երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին։ (Մատ. Ե. 4)։ Ըստ որում Աստուած նոցա. ...ջնջեսցէ զամենայն արտօսր յաչաց նոցա, և մահ ոչ ևս զոյ, ոչ սուգ, և ոչ աղաղակ, ոչ ցաւք և ոչ աշխատանք ևս զոյ, զի առաջինն էանց։ (Յայտ. ԻԱ. 4)։ Եւ տես-

ցեն, զընդարձակութիւն քաղաքին ոսկի մաքուր որպէս զապակի պայծառ.... և ոչ մայէ անդ ամենայն չարակամ. և պիղծ և ատութիւն. բայց միայն որք գրեալք են ի գպրութեան կենաց գառին. (ԻԱ. 21. 27) և ծառայք նորա պաշտեսցեն զնա. և տեսցեն զերեսս նորա.... և գիշեր ոչ եղիցի անդ, և ոչ եղիցին անդ պէտք ճրագի, և լուսոյ արեգական, վասն զի Տէր Աստուած լուսաւորեսցէ զնոսա, և թագաւորեսցեն յաւիտեանս յաւիտենից. (ԻԲ. 3. 4 և 5):

ՀԻԱՆԴՈՒԹԻՒՆ ՄԵՂՈՒԱՑ, ՄԱՀ ՆՈՑԱ ԵՒ ՀԱՆԴԻՍԱԿԱՆ ՑՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Մեղուք բաց ի պէս պէս վտանգից պատահելոց ի հողմոց, ի թռչնոց և յայլ ձաղխորդ պատահարաց ի ճանապարհի անէ ծաղիկաքաղութեան և ջրաբերութեան հի-

տանդանան ի խայթելն զոք, որոց խարտոքն
Փեան ի խայթեալսն, և ինքեանք խմայեալ
զմօտալուտ մահ իւրեանց, աճապարեալ
դիմեն ի բնակարան իւրեանց առ ընկերսն,
և անդ թաւալեալ մեռանին։ Բարձեալ
կենդանի մեղուաց զմեռեալս իւրեանց. է
որ՝ բզզալով. և է որ՝ լռութեամբ՝ հանեն
արտաքոյ քաղաքի բնակութեան իւրեանց
և ձգեն յարկանոցսն. ընդ որս ինքեանք ան-
ցուցարձ ունին. և բաց յայսցանէ երբեմն
տեսանին յարկանոցին հրապարակի՝ մե-
զուք՝ կենդանիք, այլ խարտալուրիք,
թևաւոք, ոտնաւոք և այլ և այլ կերպիւ ա-
բատուորք. վասն զի տեսեալ զնոսա ոչ ա-
ցին, թէ ան յոյս հիւանդ են, և ոչ ևս կա-
րին պիտոյանալ ի զորձս մշակութեան
մեղրակազմութեանն պատուական զոր-
ծարանին. ի բարկութիւն բրդեալ և յար-
ձակեալ ինոսա կալնուն զօձեաց նոցա յա-
ջմէ և յահեկէ. և հանեն արտաքս ի կա-

ցոցաց կենդանեացն յաշխարհ մեռելոց իբր ի դատապարտարան, որոց անդէն անկեալ հոգեվարեալ յետ սակաւ ներքական աւաղաձայնութեանն սատակին։

Ամենայն մարդ յերեքալեան ճանապարհի բազմարկածեան կենցաղոյս կարէ անկանիլ ի ներքոյ պէսպէս հոգևոր և մարմնաւոր հիւանդութեանց, այլ միշտ նոյնհետայն պարտի մեղս օրէն մտաբերել զիւր սեփհական հայրենիս ըստ առաքելաքարոզ պատուիրանին թէ՝ զվերինն խնդրեցէք, ուր Քրիստոսն նստի ընդ աջմէ Աստուծոյ, զվերինն խորհեցարուք, մի՛ զայս՝ որ յերկրի ասա է։ (Կողոս. Գ. 1, և 2)։ Եւ որպէս հիւանդուս մեղուք ըստ հասարակաստեղծ բնաւորութեանն նախ աճապարեալ խառնին ի զաս ողջոյ, և ապա անկեալ մեռանին ի վերթակին թագաւորութեան, այնպէս և ամենայն ոք հիւանդացեալ թէ հոգւով և թէ մարմնով, պարտի ճշմարիտ

զոչմամբ և յաւագին խոստովանութեամբ մեղաց իւրոց նախ՝ հաղորդիլ կենդանարար Մարմնոյ և Արեան Տեառն, ոգեխառնիլ ընդ նմա, և. հուսկ յետոյ՝ յետ տեղի տալոյ կենդանութեան ի մարմնոյն գոյութենէ, ամենայն ուրախութեամբ զիմել ի վերնագաւառ բնակութիւն երկնից խորանաց, որպէս ի տուրբ մկրտութեանն պատուիրեցաւ նմա յասել քահանային՝ առ զլաստերս հաւատոյ և բարի գործոց, զի ի գալ երկնաւոր փեսային արժանացիս մտանել յառագաստն լուսոյ երկնից խորանաց։ (Մաշտոց) Ասացի ամենայն ուրախութեամբ վանայնորիկ, զի որպէս այր հաւատարիմ հրաւիրեալ առ երկրաւոր արքայ իւր, ուրախութեամբ ճանապարհորդի, սոյնպէս և ամենայն ուղղափառ և բարեկրօն քրիստոնեայ ճանապարհորդեալ առ երկնաւորն թագաւոր, պարտի կրկին ուրախութեամբ փոխիլ յաշխարհէս. մի՝ զի փրծանի յու-

նայն կենդանոյս անկայուն վայելչութեանց, որք որքան խատելեցուցիչ են աչաց, այնքան և վատնդաբերք յամենայն քայլափոխս մեր. և երկրորդ՝ զի որ փոխի յաշխարհէս, առ Աստուած փոխի. ի մեռելութենէ ի կեանս, յապականութենէ՝ յանապականութիւն, ի փոփոխական վայելից՝ ի մշտաւաւէրն վայելչութիւն, ի հոգեմէ տրտմութեան՝ յանանց ուրախութիւն, ի խաւարէ՝ ի լոյս, յառօրէից՝ ի մշանջենաւորութիւն, որոց վասն ի դէպ զայ ամենայն բերանոյ ասէպ ասէպ կրկնել զքան սուրբ զրոյ՝ երանի՛ մեռելոյ, որք ի Տէր ննջեցին։

Սեղուք զմեռեալս իւրեանց անդր ձգեն, ուր ինքեանք անցուցարձ առնեն. զի՞նչ յայսմանէ մակաբերել պարտ է, եթէ ոչ՝ յանեցանել մեր ընդ դերեզմանս հանդուցելոց, իսկոյն պարտիմք զմտաւ ածել թէ որովհետև հողածին եմք և վճիռ անդարձ յառաջագոյն նախանշեալ է մեզ

դառնալ ի հող, ուստի առաք, ուրեմն մեզ
ևս երբ և իցէ կանուխ կամ անագան հարկ
է մտանել ի հող գերեզմանն։ Եւ որպէս մեք
զայլոցն ընթերցաք և ընթեռնումք և ըն-
թեռնլոց եմք զառապանագիրս, նոյնպէս և
այլք զմերս տեսցեն և կարդասցեն յիւ-
րուն ժամանակի, որոյ վասն գեղեցիկս
խօսի մերս քերթողահայրն յասելն՝ և այս-
պէս բարեկարգութեամբ վարեցեալքն նո-
վին մխիթարին յուսով՝ դարձեալ զնոյն ըն-
դունել յանձինս յիւրաքանչիւրն հասեալ
վախճանի։ (Գիրք պիտոյից յաղագս գե-
րեզմանակրիսի։)

Սրատաւոր մեղուք կենդանւոյն զնին
ի գերեզմանի արիանոցին։ Յայսմանէ ու-
սանիլ պարտ է մեզ, թէ մարդիկ՝ որք պէս-
պէս մեղօք արատաւորեալքն են, թէև
կենդանի են առաջի մարդկան այլ բարո-
յականապէս ի կարգս մեռելոց են համա-
բեալ առաջի Աստուծոյ ըստ այնմ թէ՝

այսպէս ասէ Տէր....տեսի զգործս քո, զի անուն կենդանւոյ ունիս, և մեռեալ ես. լեր արթուն, և հաստատեա այսուհետև, զի հանդերձեալ ես մեռանիլ. քանզի ոչ գտի զգործս քո կատարեալ առաջի Աստուծոյ: (Յայտ. Գ. 1 և 2):

Մեղուք՝ որք յաւուրս ներզուխթեանց հասելոց լինիցեն յերեսաց անիրաւութեանց օտար մեղուաց՝ դնին ի Թագաւորեան, յոչինչ գործ պարապեալ բնաւ, կիւրակէ առնեն զօրն զայն համաձայն կամաց Տեառն իւրեանց: Հարցանեմ մեղուասէր, եթէ չես բթահայեաց յօրէնս Տեառն Աստուծոյ, ահա խոհեմ մեղուքս եմ քարոզեն քեզ սուրբ պահել, ոչնախելամքեալ զօր միաշաբաթին, այսինքն է՝ զվերջ օր գործել և առնել զամենայն գործս քո, իսկ յաւուրն եօթներորդի շաբաթ Տեառն Աստուծոյ քում յորում պարտական ես, այո՛ պարտական և միշտ պար-

տական գնալ յեկեղեցի, որ է տուն ցեռան
և տուն աղօթից՝ և անդ փառաւորել զաս-
տուած արարիչ քո, և հոգւով և ճշմար-
տութեամբ երկրպագանել նմա, զի օրհ-
նեաց տէր զօրն եօթնեերորդ և սրբեաց զնա
Ելից. ի. 11։ Իսկ եթէ պղծեցես զնա,
մահու մեռանիցիս, զի ամենայն՝ որ գոր-
ծիցէ ի նմա գործ, սատակեսցի, ասէ զիր։
Ելից. ա. 14։ Ս.զաչեմ զ.քեզ մոռաու-
թեամբ քննել զոյս պատուիրան վնասն՝
զի տուօղն է Ս.աստուածն երկնի և երկրի
և ամենայն արարածոց երևելեաց և ան-
երևութից։ Երկրորդ՝ զի պատուիրանա-
զանցիցն զմահ սպառնայ, որպէս պատա-
հեցաւ երբեմն ողորմելի աղքատի ուրուն
ելելոյ ի տանէն յաւուր կիւրակէի ժո-
ղովել զփայտս և ահա անդէն դառն մա-
հու եղև ժառանգաւոր. կամ որպէս յա-
ւուրս մեր իշխանաւորի մուտ պատահե-
ցաւ, որ զնորակառոյց տան իւրոյ զտանիս

հոգել կամելով, յանկարծ կործանմամբ տանն այնորիկ զմահ ճաշակեաց; և Երբորդ՝ զի Աստուած իբրև արարիչ քո և նախախնամօղ կարէ և կամի հրամայել քեզ զվերց օր գործել վասն քո կարեացդ, իսկ զօրն հօթներորդ նուիրել ի ծառայութիւն ինքեան. վասն այսորիկ պարտ իսկ է քեզ զայս պատուիրան տուրբ պահպանել ամենայն մասամբք առանց ամենայն զանցառութեան: Ցիշեա՛ սիրելի, զի թիւն հօթներորդ ի սկզբանէ անտի աւուրց աշխարհի միշտ օրհնեալ է և պատուելի. վասն այն զի՝ ինքն օրէնդիրն Աստուած յաւուրն հօթներորդի հանդեաւ յամենայն գործոց իւրոց: Ո՞չ հօթներորդ էր Ենովք յաղամայորդոչ տեսեալ զմահ, կենդանւոյն վերացաւ յերկինս, և Մովսէս հօթներորդ էր յաբրահամէ, արժանացաւ Աստուածախօսութեանն շնորհի և ընդունելոյ զտասնաբանեայ պատգամն ցեռան. յեօթանասա-

ներորդում յեօթներորդումն ազգահամա-
բի մարմնացաւ բանն Աստուած վասն փրկ-
կութեան ազգի մարդկանանկն լոյն ազատաւ
որպէս թուէ սուրբ աւետարանիչն Ղուկաս
ԻԺանելով ցարդամ, զի գիտացուք մեք, թէ
ո՞րքան սուրբ է և պատուելի թիւն եօթ-
ներորդ. յեօթներորդում աւուր յարեաւ
Քրիստոս ի մեռելոց, և յեօթներորդում
աւուր առաքեաց զՀոգի սուրբ ի դաս
երԻանիկ առաքելոց, զի ծանիցուք մեք,
թէ պարտիմք զվեց օր գործել զգործս մեր,
և զեօթներորդն պատուել ի փառս աս-
տուծոյ, որով կեսամք և շնչեմք և եմք, և
ահա առ այս վախճան սահմանեաց Տէր
ի ձեռն սրբոց առաքելոց և հեռեռղաց նոցա
և ուղղափառ վարդապետաց եկեղեցւոյ
զկիրակէս, որ թարգմանի տէրունի, կամ
տէրունական, և զյիշատակս սրբոց, զի յայ-
նոսիկ աւուրս ոչինչ բնաւ գործեցուք,
այլ ժողովեալ յեկեղեցի փառաւորեցուք

միայն զանուն աւրբ նորա, և պատուեա-
ցուք զյիշատակս հաւատարիմ ծառայից
նորա, որք բարեխօս են վասն մեր։ Բայց
բեր այժմ տեսցուք, թէ ի մերումն դա-
րու այսպէս կատարի որպէս սահմանեալն
է յօրէնսդրէն։ ոչ բնաւ. ողորմելի դար, ի
բարեմասնութենէ զրկեալ դար, վասն զի
անօրէն սատանայի, թէ ի ծոնս տէրունա-
կան փառաւորի ատուած ի մարդկանէ,
շարժեալ նախանձու ի բարկութիւն բրդի
և կոչէ զամենայն շար հրեշտակս իւր և
զպրշմօնեայս և ասէ, Եկայք, ընեցուցուք
զամենայն ծոնս ատուծոյ յերկրէ։ Սաղմ.
հդ. 8. այսինքն է՝ Եկայք հրեշտակք չա-
րիս, և օդնեցէք ինձ մեռաւորիս, զի զօրու-
թեամբ բազմաւ ձար դացուք ջնջել և խա-
պառ անհետ առնել յերեսաց երկրի զյի-
շատակս ամենայն ծոնից Տեառն Աստու-
ծոյ, զի մի՛ ոք ի մարդկանէ ունիցի զժա-
մանակ ատուծ պաշտու թեան և փառա-

բանութեան · եկայք շփոթաբարբդ աշ-
խարհի, շփոթեացուք զմիտս քրիստանէից,
հաճոյական ցուցանելով նոցա զվատակս,
զհոգս, զդրծս և զամենայն զբաղմունս
աշխարհի, զի մի՛ երբէք ուսնամբեացեն
նոքա զաւուրս տէրունիս, և մի՛ գնասցեն
յեկեղեցի լսել զժամերգութիւն, կամ տե-
սանել զարարողութիւն սուրբ խորհրդոյ
պատարագի, և կամ պատուել զյիշատակս
սրբոց · և այսպէս ի զալ աւուրց հանդի-
սաւոր տօնից և կիւրակէից, յորս արժան
քրիստանէից ի գործոց և ի հոգոց աշխար-
հի հեռի կալ, պարապիլ ատաւածպաշ-
տութեան և կատարել զառաքնամիտ պա-
տուիրանն, և ահա սատանայ յառաջ մատ-
չի անաւօթաբար և ասէ ցնոսա, զինչ տօն
զինչ պատարագ, զինչ վառաբանութիւն,
լաւ ևս է ձեզ գործել զգործս ձեր, քան
թէ գնալ յեկեղեցի · զինչ ուղիք յեկեղե-
ցւոջ, զինչ օգուտ ձեզ ի պատարագէն ·

ոմ արհեստաւոր, զնա՛ զու ի կրպակ քո
բաց զայն, նիւտ փառաւորապէս, զորմնա
զգործս քո և խաբեա՛ զգնօղն, զի աւելի
շահեսցիս քան զոր ունիս։ Ո՞վ վաճառա-
կան զնա՛ զու ի վաճառանոցն, առ զհա-
շիւ քո ընդ պարտապանիդ, մի՛ թողուր
անցանել աւուրս առանց առաքօսութեան,
որ է ծնունդ քո ի ժամ վաճառդ, և որ-
պէս այլք վաճառեն, ըստ այնմ արա՛ և
դու, զի բազում շահս ունիցիս։ Ո՞վ ազ-
նուական, յայտնի է ինձ, զի գործք քո
են ի ձեռս այն ինչ դատաւորի։ Նիւտ ի քա-
ռաձի կառս քո և զնա՛ ի տուն նորա, խօ-
սեա՛ց ընդ նմա կեղծաւորութեամբ, խա-
բեա՛զնա, և զխանդարեալ գործս քո ուղեա՛
զարմանամ ես, զի զու փութ առ երթալ ի
ծօնն որ առանց քո ևս ունի կատարիլ, և
անփոյթ ութեամբ թողուս զգործս քո, ըստ
ևս է թողուլ ամենեսն զծօնն և փութալ
յամբոյկ հարկաւոր գործոցդ. զի՞ սպասես

անշահ զօրանջման զանդակայ։ վասն էր մնաս պատարագի, երբ մեծ և առաջին պատարագ է քեզ կատարումն գործոցդ։ զի՞նչ օգուտ քեզ յեկեղեցական երաժըշտութենէ, զի դու վարդապետ չես, զի գըներացեալ քարոզ կարդացես։ և ոչ քահանայ, զի զխորհուրդ մարմնոյ և արեանն ի վերայ սեղանոյն օրհնեսցես։ (Գրիգոր Տաթ։ 'ի գիրս հարցմանց, երես 606)։ և ոչ սարկաւագ ես, զի խնկարկութեան պարապեալ, սպասաւորեսցես քահանային ի խորհուրդ եկեղեցւոյն, զսկիհն պատրաստեսցես, և զաւետարանն կարդասցես 'ի բեմն։ (անդ և։) և ոչ կիսասարկաւագ, զի ընդ միւս յատկացեալ պաշտամանցդ և զհանդերձս սեղանոյն լուասցես։ (անդ և։) և ոչ ջահավառ, զի զմոմեղէնն վառեսցես 'ի սեղանն։ (անդ և։) և ոչ երդմնեցուցիչ, զի երդմնեցուսցես զդիւահարն, և զերեխայն եկեալ 'ի մկրտութիւն հրաժարե-

ցուսցես 'ի սատանայէ, (անդ և.) և ոչ ընթերցող, զի կարդացես զմարդարէս և զՀին օրէնս յեկեղեցին. (անդ և.) և ոչ դռնապան կամ ժամկոչ, զի բացցես զդուռն եկեղեցւոյ. (անդ և.) և ոչ եկեղեցական, զի զգանձանակս եկեղեցւոյ բարւոք կարգադրեսցես որպէս և կամիս. թո՛ղ նոքա զբաղնուցուն այր իւրաքանչիւր զիւրով պաշտամամբ, թո՛ղ նոքա երգեսցեն ոքքան և յորժամ ուր և ախորժեն, այլ դուերթ, ուր ասեմ քեզ վասն անձնական օգտի քո, զի շատ շահեսցիս և երանելի լինիցիս յամենայն կեանս քո:

Ա.հա՛ զայսպիսի ՁՆաստաբեր խորհուրդս յառաջ բերէ ամենաչարն սատանայ, և քրիստոնեայք ամենայն հնազանդութեամբ լսեն և կատարեն. լաւ համարին զվաստակ վաճառականութեան, կամ զնալ յայց և 'ի տես իշխանաւորի ուրուճն. իսկ զպահպանութիւն պատուիրանի Տեառն յոչինչ

գրեն, և լսել զբանն աստուծոյ աւելորդ կարծեն։ Տաճիկք և Հրէայք զաօնս իւրեանց անլոյծ պահեն, իսկ քրիստոնեայք աօնաստեաց գտանին, և դիմեն ախորժանօք յաշխարհական զբաղմունս և 'ի գործս, զորս ցուցանէ նորա առաջնորդ նոցա սատանայ, և յորոց ոչ զօրհնութիւն աստուծոյ, այլ զբարկութիւն նորա ժառանգեն, և 'ի գործոց անտի ոչ զշահ ինչ քաղեն, այլ զանէծս կուտեն 'ի գլուխս իւրեանց որպէս ասէ գիր։ Ոստայնք նոցա ոչ ձորձեսցին, և ոչ զգեցցին 'ի գործոց ձեռաց իւրեանց։ քանզի գործք նոցա գործք անօրէնութեան են, և գործք անօրէնութեան 'ի ձեռս նոցա։ ոտք նոցա 'ի չարիս ընթանան, վաղվաղեն զեղուլ զարիւն անպարտ. խորհուրդք նոցա խորհուրդք անզգամաց։ բեկումն և թշուառութիւն 'ի ճանապարհս նոցա։ և զճանապարհն խաղաղութեան ոչ ծանեան։ և ոչ զոն իրաւունք 'ի ճանա-

պարհս նոցա, զի շաւիղք նոցա, ընդ որս գնան՝ խոտորեալք են։ Եսայ. ԾԹ. 6, 7, 8։ Տեա զայս մեղուասէր, լաւ տես և ուսիր յիմոց մեղուից պատուել զօր Տեառն և պատուել զՀանգիստ յաւուր միաշաբաթուն, զի մի՛ հասցեն քեզ չարիք. փութա՛ դու միշտ 'ի ծոնս տէրունականս 'ի տաճար փառաց սրբութեան Տեառն Աստուծոյ. և եթէ նախաչարն հրապուրեսցէ զքեզ յիւր խորհուրդ նենգաւոր, դու մի՛ լսեր խորհրդեան նորա, և եթէ կամիս, զի հեռացի 'ի քէն անիրաւն, կարդա՛ միշտ զպատուական զայն երգ սաղմոսերգուին Դաւթի, որ ասէ՝ Աստուած, քաղցր է ինձ լսել զձայն օրհնութեան քո և պատմել զամենայն սքանչելիս քո. Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո, և զտեղի յարկի փառաց քոց։ Սաղմոս ԻԲ, 7, 8, և թէ՝ զմի խնդրեցի 'ի տեառնէ, և զայն աղաչեմ բնակիլ ինձ 'ի տան տեառն զամենայն ա-

ուրս կենաց իմոց։ Տեսանել ինձ զվայելչութիւն տեառն, և հրաման տալ 'ի տաճարի նորա, ծածկեաց զիս 'ի խորանի իւրում յաւուր չարի, ընդ յարկաւ արար զիս 'ի ծածկոյթ խորանի իւրում։ Սաղմ. ԻԶ, 4, 5։ և ահա ընդ սաղմոսելդ բարձցին մերժեցին 'ի քէն որոգայթք չարին, և պահպանողական աջ Տեառն ամենակալի հովանացի ի վերայ քո, և քեզ անուն կոչեսցի պատուիրանապահ, և ոչ պատուիրանազանց սատրանկեալ անիծից։

Յաւարտ բանիս մանուածոյ լցեալ, լիացեալ, և ապշեալ իսկ սխրագործութեամբք իմ պատուական մեղուաց, յայտնեմ ոչ օտարաց խօլապատութեանց հեռաւելոց, այլ իմոց անմենք մեղուասիրաց՝ որոց աչք են ի գլուխս և խելք ի խելապատակս, թէ զայլ և այլ զարմանալի գործս մեղուաց իմոց, որք տակաւին չեն ինձ յայտնի մի ըստ միոջէ, և փոքրիմաց մատաց

իսկ անհասկանալի, ոչ կարացի այժմ հը-
բատարակել բոլորապէս, այլ թողում ազ-
գասիրաց բարեջանից և վեհագունից քան
զիս ամենայն մասամբք և կարգաւ, և կա-
րողութեամբ և զլխակարգութեամբ՝ հետ
զհետէ գրով աւանդել զնոյնս յետագայից,
և ես յետ փոքրաբանական վիպասանու-
թեանս ամփոփեալ ասէն զշրթունս
նուաստ գրչի իմոյ, զիաբերան գոհութեամբ
տամ փառս Բարերարին Աստուծոյ, որ ետ
ինձ զկարողութիւն բանաստեղծօրէն բերել
այսքանեօք ի վէպս գործոց բարեշնորհ մե-
ղուաց ի մխիթարութիւն ընթերցասիրաց
որդւոց ծոցոյ Հայաստանեայց սուրբ Եկե-
ղեցւոյ նորոգելոյ բազմաջան քրտամբք կեն-
դանի նահատակին Քրիստոսի սրբոյն Գրի-
գորի Լուսաւորչի, իմն յատուկ պաշտպանի
յաւուրց անտի մանկութեան իմոյև բաղ-
մերախտ հօր և հայրապետի։

Վ. Ա Խ Ճ Ա Ն.